



Lucy

933

2012

580.

2147

2000 ար

933

580.

2 SEP 2006

ՊԱՐԹԵՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե Խ

ՆՐԱՆՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՏ.

(250 Քրիստոսից առաջ—226 Քրիստոսից յետոյ)



Արտատպած «Արարատ» ամսագրից

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. ՄԿՐՏՅՒ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2148

ՎԱՀԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՇՆԻ

1897

Дозволено цензурою, 7 июля 1897 г. г. Тифлисъ.



933-2012
5128 | 18928
38

ՊԱՐԹԵՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե ի

ՆՐԱՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՏ.

(250 Բրիսնսից առաջ — 226 Բրիսնսից յետոյ)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի ճակատագիրը սերտ կապուած է եղել միշտ իւր հարեան մեծ ազգերի ճակատագրի հետ, ուստի և հայոց իսկական պատմութեան զետու-
թիւնն հնարաւոր է այդ ազգերի պատմութեան ծանո-
թութեամբ. եթէ մեր հնագոյն պատմութեան թելե-
րըն հիւսուած են ասորա—բաբելոնական ազգերի պատ-
մութեան թելերի հետ, հին և միջին պատմութեան
թելերն անքակտելի կերպիւ կապակցուած են պարս-
կական պատմութեան հետ: «Արարատ»ի էջերում
արդէն իսկ պարսկական պատմութեան մի դլխաւոր
շրջանն, Սասանեան պատմութիւնն, զետեղեցինք. այժմ
մտադիր ենք պարթևա—հայկական շրջանի պատմու-
թիւնն անելու համաձայն յոյն և լատին աղբիւրների:
Ինչպէս Սասանեան պատմութիւնը նոյնպէս և պար-
թևականը մշակուած է անգլիական հանրագիտակ
քառա-
րանի [Encyclopaedia Britannica] համար արևելեան պատ-
մութեան երկու հեղինակաւոր զետնականների ձեռքով,
առաջինը Թ. Նէօլդէքէի, իսկ երկրորդը վաղամեռ Ա.
Ֆոն Գուլթմիզի, որ յայտնի է հայ բանասիրութեան
մէջ իւր Խորենացու և Աղաթանգեղոսի հիմնաւոր
քննութիւններով: Արևելեան ազգերի պատմութիւնն
համաձայն յոյն և լատին հեղինակների, դրամագիտու-

թեան և արեւելեան աղբիւրները վերականգնելու գործը պատմական գիտութեան դժուարագոյն խնդիրներէց մէկն է, որ անջան յաջողութեամբ լուծել են այդ երկու գիտնականները: Թէպէտ արդէն մի տասնամեայ շրջան է անցել այդ պատմութեանց հրատարակութիւնից, սակայն դրանք ցայժմ իսկ գիտութեան վերջին խօսքն են կազմում: Գուլթշմիդի շարադրութեան գերմաներէն բնագիրն «Իրանի և նրա դրացի երկրների պատմությունը» վերնագրով՝ հրատարակել է նոյն գիտնականի մահուանից վերջը նրա բարեկամ Նէօլդեքէն: 1

Գուլթշմիդի շարադրութեան ամբողջ թարգմտնութիւնը թէպէտ և կարող էր օգտակար լինել հայկական պատմութեան ուսումնասիրողներին, սակայն տեղի սղութեան պատճառով ստիպուած ենք միայն հայկական յարաբերութիւններին վերաբերեալ հատուածները առաջ բերել այստեղ, որովհետեւ մեր անմիջական նպատակը հայոց պատմութեան գիտութիւնն է:

«Իրանի և նրա հարևան երկրների պատմութիւնը» երկու մասից է բաղկացած. առաջին մասի վերնագրւոն է «Մակեդոնական շրջան» և բռնում է դրքի I—74 երեսը, իսկ երկրորդին՝ «Արշակունեան շրջան» 75 երեսից մինչև 172 երեսը: Առաջին շրջանի համար մենք ունինք երկու տեսակ դասական (կլասիք) աղբիւր, մին պաշտօնական, քաղուած Պտղոմէոս Թազաւորի և Կասանդրէացի Արիստոբուլոսի երկերից՝

Արիանոսի և Պլուտարքոսի ձեռքով, միւսը ոչ պաշտօնական, յոյն Կլիտարքոսի պատմութիւնից, որ ճշգրտութեամբ ծաղկաքաղ է արել Դիոդորոսը. նոյն աղբիւրիցն են քաղել Կուրցիոսը և Իւստինը կամ իսկապէս Տրոգոս Պոմպէոսը, որի մէջ խառն են դարձեալ մի երրորդ, Ադէքսանդր Մակեդոնացուն թշնամի, աղբիւրից քաղուածներ: Նորագոյն պատմագիրներէց գերմանացի Դրոյդէն պատմագրի շարադրութիւնն առաջին աղբիւրն է վերայ է հիմնուած, մինչ Գրոտէն երկրորդիցն էլ օգտուել է: Ադէքսանդրի յաջորդները պատմութեան համար աղբիւր են Դիոդորն, Փոտի ծաղկաքաղի մէջ պահուած Արիանոսի և Պլուտարքոսը, որոնք ամենքն էլ ստուգապատում Կարէկացի Հիերոնիմոսիցն են քաղել: Նորագոյններից այս մասը մշակել են դարձեալ Դրոյդէն և Գրոտէն: Սկսած 220 թուից հին աղբիւրների վրայ աւելանում են և Պոլլեբիոսի նշանաւոր պատմութեան տուած տեղեկութիւններն: Հելլենականութեան (Hellenismus) շրջանի շարայարեալ պատմութիւնը նորագոյն ժամանակներումս բացի Դրոյդէնից ու Գրոտէնից մեզ տալիս է Գուլթշմիդը:

Երկրորդ՝ բուն պարթեական շրջանի օժանդակ միջոցներն ու աղբիւրներն աւելի ևս նուազ են. մինչև 9 թ. Քրիստոսից առաջ շարայարեալ պատմութիւն է տուել մեզ Տրոգոս Պոմպէոսը, որի քաղուածքն ունինք մենք Իւստինի երկում, որի մէջ սակայն ծաղկաքաղ անողը բաց է թողել 94—55 (Քրիստոսից առաջ) թուականները պատմութիւնը:

Հռոմէացոց և Պարթեաց պատերազմների մասին (53—36 Քրիստոսից առաջ) ընդարձակագոյն պատմում է Պլուտարքոսը Կրասոսի և Անտոնինոսի

1. Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, von Alfred von Gutschmid. Mit einem Vorwort von Th. Nöldeke. Tübingen 1888. verlag der H. Lauppischen Buchhandlung.

կենսագրութիւնները մէջ: Հռովմէական կայսրութեան շրջանում հռովմէացոյց մէջ այն հայեացքն էր կազմուել, որ պարթեաններն էլ իրանց հաւատարմի ազգէն և երկրէն տեղապետութիւնը բաժանուած է երկու ազգերի մէջ, այս է ահա պատճառը, որ լատին պատմադէրներն աշխատում են մի շարայարեալ պարթեական պատմութիւն տալ մեզ և երբեմն այնպիսի տեղեկութիւններ ևս հաղորդում են, որ ամենեւին կապ չունին հռովմէական պատմութեան հետ: Հետո՞հիւ այս հայեացքը մենք պարթեաց շարայարեալ պատմութիւն ունինք 69 (Քրիստոսից առաջ)—72 (Քրիստոսից յետոյ) Իւոն Կասիոսի, Յովսէպոսի և Տակիտոսի երկերի մէջ: Պարթեաց պատմութեան անյայտ շրջաններն են մեզ համար 94—69 Ք-ից առաջ և 72—227 Ք-ից յետոյ: Նշանաւոր աղբիւր են մեզ համար դրամներն սկսած 37 թուականից Քրիստոսից առաջ, որովհետեւ այդ թուականից սկսած նրանց վրայ կան տարեթուեր:

Պարթեաց պատմութեան մշակողներից պիտի յիշենք Յ. Փ. Վայլլանին, որի «Արշակունեաց տէրութիւն»¹ վերնագրով գործը և Լոնդոնիւյին, որի «Արշակունեան տարեգրութիւնը»² երկն, երկուսն էլ հիմնական աղբիւրներ են եղել յետագաների համար: Այս երկու երկերը լրացումն կարող է համարուել Գիլհէմ դը Սէն Կրուայի մի շարագրութիւնն Փրանսահեմ. յիշատակարանների մէջ³: Դրամագիտական շա-

րագրութիւններից պարթեաց պատմութեան համար նշանակութիւնն ունին Է. Ք. Վիսկոնտիի յունական դրոշմագիտութիւնն [Iconographie Grecque] Բարթոլոմէյի Արշակունեաց դրամագիտութեան հետազոտութիւնն [Recherches sur la numismatique Arsacide] և Լոնդոնի պէրէյէի յիշատակարանն Արշակունի պարթե թագաւորների դրամագիտութեան և ժամանակագրութեան վերայ [Mémoires sur la chronologie et l'iconographie des rois Parthes Arsacid, Paris 1885]: Դրամների ցանկերի հրատարակութիւններից նշանաւոր են պարթեաների պատմութեան համար Կոմա Պրոկէշ—Օստէնի «Պարթե թագաւորների դրամները»¹ և Պէրսի Գարդների «պարթեական դրամները»:² Պարթեաց պատմութեան վերաբերեալ նոր շարագրութիւններից աչքի ընկնողներն են Հ. Հնայդէվերթի, Գ. Ռաուլինսոնի և Փր. Հպէդէլի երկերն, իսկ դրամագիտութեան վերաբերեալ Յ. Լինդսայի գործը:

Բացի այս օժանդակ աղբիւրներից և ամբողջական շրջանների հետազոտութիւններից կան բազմաթիւ առանձնական խնդիրները մշակութեան նուիրուած մենագրութիւններ ևս:

gouvernement des Parthes [Mém. de l. Acad. des Inscr, L, 48 ff, 755 ff.]:

1. Le C-te Prokesch—Osten, Les monnaies des rois Parthes, Paris 1874—75.

2. Percy Gardner, The Parthian coinage, London 1877.

1. I. Foy Vaillant, Arsacidarum imperium, Paris 172.

2. L. Du Four Longuerue, Annales Arsacidarum, Strassburg 1732.

3. G. E. I. Guilhem de Sainte—Croix, Mémoire sur le

Ա.

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աղէքսանդր Մակեդոնացին վերջնական հա-
րուած տուաւ պարսիկ Աքեմենեան հարստութեան
Գաուզամէլայի ճակատամարտում, որից յետոյ 1-ին
հոկտեմբերի 331 թ. Բրիստոսից առաջ, իրեն
Ասիոյ թագաւոր հրատարակեց: Թէպէտ և այս
ճակատամարտից յետոյ Մակեդոնացին դեռ ևս
չատ կռիւներ մղեց մինչև պարսից տէրութեան
ամբողջ գրաւումն, սակայն այդ թուականից իսկ
սկսուում է մակեդոնական գերիշխանութիւնն Ա-
սիայում և Աղէքսանդրի արքայից արքայութիւնը:
Հայաստանն Աքեմենեան շրջանում պարսից
տէրութեան մի սատրապութիւնն էր կազմում,
դրան վկայ են Դարեհի արձանագրութիւնները:
Մակեդոնացիք ժառանգելով Աքեմենեան տէր-
ութիւնն ամբողջապէս, տէր համարուեցան և հա-
յաստանի, թէպէտ և յատկապէս չը սկսեցին

այդ երկիրը: Հայաստանի վերաբերութեամբ Աղեքսանդրն անշուշտ այնպէս վարուեցաւ, ինչպէս այլ սատրապութիւնների հետ, հին սատրապն համարուեցաւ նոր արքայից արքայի պաշտօնեայ, իսկ երկրի վարչութիւնն և ներքին կազմակերպութիւնը նոյնը մնաց:

Դէպի Մարաստան ձեռնարկած արշաւանքի ժամանակ Աղեքսանդրի զնդերն անցան և Հայաստանի սահմաններով, բայց նրանք չը մնացին այնտեղ, այլ մեծ աշխարհակալի հեռաւոր արշաւանքներին մասնակցելու շտապեցին: Աղեքսանդրի և նրա անմիջական յաջորդների ժամանակ Հայաստանի անունը չը կայ ամենեւին սատրապութիւնների մէջ, որ և է սատրապի անուն անգամ յայտնի չէ, հաւանական է, որ ով պարսից տիրապետութեան ժամանակ երկրի սատրապն էր, նա էլ տէր մնաց Հայաստանին, ինչպէս Ատրոպատէսը, որ 328-ին Մարաստան սատրապ ուղարկուեցաւ և ապա 321-ից սկսած հիմնեց Ատրպատականի փոքրիկ անկախ թագաւորութիւնը: Ատրպատականի թագաւորութիւնն համարուում է Աղեքսանդրի տէրութիւնից բաժանուած և անկախութեան հասած երկրներից առաջինը¹ հաւանական է կարծելը, որ Հայաստանն աւելի ևս վաղ հասած լինի ան-

կախութեան, այսինքն Գաուգամելայի ճակատամարտից քիչ վերջը, որովհետեւ ոչ Աղեքսանդրի և ոչ տէրութեան ինամակալների ժամանակ չենք լսում մենք Հայաստան ուղարկուած որ և է սատրապի անուն:

Աղեքսանդրի ժառանգութիւնից անկախ տէրութիւններ կազմելու ձգտումն երևան եկաւ նրա մահուանից քիչ յետոյ, Բաբելոնի սատրապ Սելևկոսը, երբ Պտղոմէոսի օգնութեամբ կրկին իւր սատրապութիւնը ձեռք ձգեց 312-ին, արևելքից նրան անկախ թագաւոր համարեցին: Այս 312 թուականն է ահա, որ համարուում է դարագլուխ Սելևկեան տարեթուի, որ սովորաբար և ասորական տարեթիւ է կոչուում: Սելևկոս Նիկատորը, որ իշխեց 312—280, բաժանեց իւր տէրութիւնը 72 սատրապութեանց, որոնց մէջ պիտի հաշուել և Հայաստանն, անշուշտ իւր տեղական իշխանով: Սրա յաջորդ Անտիոքոս Սոտէրի (280—261) ժամանակ ընդունուեցաւ մակեդոնական տէրութեան երեքի բաժանումն, մի հարստութիւնը Ասիայում, միւսը Եւրոպայում և երրորդը Եգիպտոսում, այս բաժանման հիման վրայ Հայաստանն ընկնում է Սելևկեանց տէրութեան շրջանում: Անտիոքոս Սոտէրի ժամանակ կատարուեցաւ Կասպից ծովի հեռագօտութիւնն ծովապետ Պատրոկլէսի ձեռքով: Մարաստանում հիմնուած քա-

1. Gutschmid Geschichte Iran * * * S. 20.

ղաքների թուին նայելով պէտք է գուշակել, որ Անտիոքոսի տէրութիւնն արեւմուտքում ապահով էր համարուում, ուստի և նա արեւելեան և միջին երկրների ապահովութեան մասին էր մտածում:

Անտիոքոս Սոտերին յաջորդում է նրա երկրորդ որդին ԱնՏԻՈՒՔՈՍ Բ. ԹԷՈՍ (261—246), որ մի մեղկ և շողոքորթների ձեռքին խաղալիկ դարձած թագաւոր էր. սրա ժամանակ բաժանուէց Սելևկեան տէրութիւնից հիւսիս արեւելեան իրանն, ուր Սոգդիանան, Մարգիանան և Բակտրեան միացած կազմեցին յունական այն թագաւորութիւնն, որ Բակտրիայի թագաւորութիւնն անունով երկար ժամանակ տւեց: Թունական այս նոր թագաւորութեան հաստատութիւնն եղաւ առաջին խթանն պարթևների ապստամբութեան: Հիւսիսարեւելեան իրանի սահմաններում ապրում էին վրանաբնակ աւաղակաբարոյ ցեղեր, որոնք շարունակ յարձակումներ էին գործում Սելևկեան տէրութեան սահմանների վրայ և աւարով յղփացած քաշուում էին իրենց անապատները: Այսպիսի ցեղերի համար ձեռնառու էր կենդրոնական կառավարութեան հեռու Բաբելոնումը լինելը, ուստի երբ իրենց սահմաններում հաստատուէց Բակտրիական ուժեղ թագաւորութիւնն, նրանք դէպի արեւելք, դէպի Սելևկեան սահմանները, քաշուեցին:

Այսպիսի Թափառական աղդ էր Դահերի ազգը, որի մի ցեղն էին կազմում Պարնիացիք, որոնց արօտատեղիք բակտրիական սահմաններում Ոքոսի [այժմ Թէջէն] ափերին էին գտնուում: Պարնիացիների առաջնորդ երկու եղբայրք Արշակ և Տրդատ Բակտրիայում թագաւորութիւն հաստատելուց յետոյ քաշուեցան դէպի արեւմուտք և հաստատուեցան Պարթիայի սահմաններում:

Պարթևաց երկրի սատրապն էր այդ միջոցին, ասում է պաշտօնական աւանդութիւնն՝ Փերսկէս, որ Պարնիացիների առաջնորդ եղբայրներից կրտսերի, Տրդատի վերայ բռնութիւն էր ուզում գործել, որ և պատճառ եղաւ դրանց ապստամբութեան. Արշակն և Տրդատը կռիւ սկսան սատրապի դէմ, սպանեցին նրան և տիրեցին Պարթևաց երկրին, այսպէս 250 թ. Բրիստոսից առաջ գահ բարձրացաւ պարթևաց առաջին թագաւոր Արշակը:

Այս է պարթևական վերջին պաշտօնական աւանդութիւնն, որ աշխատում է պարթևաց և աքեմենեաց հարստութիւնների մէջ կապ ևս հաստատել: Ծշմարտութիւնն սակայն այն է, որ պարթևաց երկրում Արշակը չէ թագաւորել, այլ նա եղել է Պարթիայից դէպի հիւսիս-արեւմուտք գրանուած Աստաուէնի երկրի, որի մայրաքաղաքն էր Ազաակ, իշխան, իսկ նրա եղբայր Տրդատն է, որ

երկու տարի վերջը՝ 248—47-ին թագաւորել է Պարթեւաց երկրում: Պաշտօնական աւանդութեան յիշատակած Փերեկէսն էլ ոչ թէ պարթեւաց երկրի սատրապ է եղել, այլ Աստաուէնէի եպարքոս:

Սելեւեան տէրութեան վիճակն այնպիսի էր, որ ապստամբներին նուաճելու մասին մտածել անգամ կարող չէին Սելեւոսի յաջորդները. Անտիոքոս Բ-ին յաջորդել էր Սելեւկոս Բ. Կալլինեկոսը (246—226), որ պատերազմ էր մղում իւր եղբոր դէմ և որի տէրութիւնը գրեթէ բոլորովին նուաճել էր Նգիպտոսի թագաւոր Պտղոմէոս Նւերգետէսը: 242-ին կամ 241-ին Անկիւրիայի մօտ Սելեւկոս Բ. յաղթուեց իւր եղբայր Անտիոքոս չեկրաքսից և ձայն տարածուեցաւ, որ ինքն էլ ճակատամարտումն ընկել է. այս համբաւի վրայ ահա Տրդատ Արշակ կոչուող Պարսիացիների առաջնորդը մտաւ Պարթիա և երկրի եպարքոս Անդրադորասին սպանելով՝ նուաճեց Պարթեւաց աշխարհը:

Պարսկան Դահերի մասին մեր ունեցած տեղեկութիւններն հետեւեալներն են. Սիր-Դարիայի և Արալի լճի միւս կողմում ապրող Բասնդիացի կամ Պարիացի կոչուող Դահերի մի ցեղն էին Պարսները, որ ներքին խռովութիւնների պատճառով այնտեղից գաղթել էին դէպի Հիւրկանիա կամ Վրկան և դէպի Կասպից ծովի արեւելեան կողմի անապատը: Պարսիացիք պահեցին իրենց սկիւթա-

կան թափառականներին յատուկ բնաւորութիւնը. նրանց լեզուի մասին հաղորդում են, որ միջին տեղն էր բռնում սկիւթականի և մարաց լեզուի և մի խառնուրդ էր այդ երկուսի. այս շատ բնական է, որովհետեւ հնումն մինչև հարաւային Ռուսիայի անապատներն Արիացիք էին ապրում, որոնց մի ցեղն էին և Դահերը, ուստի և նրանց լեզուն էլ պարսկականի մի բարբառ պիտի լինէր: Պարթեւները ժամանակի ընթացքում թողին իրենց սկիւթական զգեստներն և սեփականեցին մարական զգեստները, սպառազինութիւնը միայն պահպանեցին, որի առանձնայատկութիւնն էր մի հիւսկէն ասպար, որ պատում էր թէ հեծեալին և թէ ձիուն: Դրամների վրայ պետութեան հիմնադիրը մի այսպիսի ասպար է հազած, հեծեալի ոտներն ու ձեռները բաց են, ոտներին կօշիկներ կան, որ խըրացներով են կապուած, զլխին կայ մի կոնաձև սաղաւարթ, որի կողքերից և յետեւից կախուած են ախանջապանակներ և վզապանակ: Սկսած Միհրդատ Ա-ից պարթեւները փոխեցին այս զգեստը պարսկական արքայից արքաների զգեստի հետ:

Պարթեւաց երկրի նուաճողներն արի հեծեալներ էին, ազատականի համար ամօթ էր համարում հետիոտն զնալը. ազգային զէնքն էր աղեղը. պատերազմելու ժամանակ պարթեւները սիրում էին յարձակուել և ապա դէպի յետ նետեր

արձակելով փախուստ կեղծել: Թափառական սկիւթ-
ների բարքերից շատ բան մնաց դեռ Արշակունի-
ների մէջ, մանաւանդ որ նրանք շարունակ յարա-
բերութիւններ էին պահպանում իրենց անապա-
տաբնակ ազգակիցների հետ, որոնց մօտ շատ Արշա-
կունիներ ապաստան են գտել յետագայ ժամա-
նակներում և նրանց օգնութեամբ կրկին իրենց
հայրենի գահը ժառանգել: Հարկաւ ժամանակի
ընթացքում երկրի տէրերը սեփականեցին իրենց
իրանցիների բարք ու վարքը և բոլորովին խառ-
նուեցան իրենց հպատակների հետ: Պարթևաց
տէրութիւնը խիստ ազնուապետական էր, սակա-
ւաթիւ ազատանիները իշխում էին ստրուկների
բազմութեանը, ստրուկին ազատելն արգելուած էր
կամ ստոյգն ասելով անհնարին: Ստրուկների
թուի մասին գաղափար կազմելու համար հերիք է
գիտենալը, որ Կրասոսին յաղթող Սուրէնի բա-
նակում 10,000 հեծեալ կային, որոնք ամենքն էլ
նրա ստրուկներն ու ճորտերն էին և այն 50,000
հեծեալներից, որ դուրս եկան Անտոնիոսի դիմացը,
միայն 400 հոգի էին ազատները:

Տրդատ Արշակ առաջին պարթև թագաւորը
տիրեց նաև Վրկանաց աշխարհին և մեծ բանակ
կազմեց Սելևկացիներին դիմադրելու և Բակտրիա-
ցիներից ապահով լինելու համար: Բակտրիոյ թա-
գաւորութեան հիմնադիր Դիոդատոս Ա. մեռաւ

շուտով, իսկ նրա յաջորդը, Դիոդատոս Բ. դաշն
կուեց Տրդատի հետ, որպէս զի դիմադրել կարողա-
նան Սելևկացիներին, որոնցից երկուսն էլ ապրս-
տամբ էին:

Սելևկոս Բ. այդ միջոցին հաշտուել էր իւր
թշնամիների հետ, յաղթել էր եղբօրն և քայ-
քայուով տէրութիւնը կրկին միացել էր, ուստի
շուրջ 238 թ. զօրքով դիմեց ապստամբների վերայ:
Սելևկոսի մերձենալը լսելով՝ Տրդատը քաշուեց
Թափառական Ապաղիանների երկիրն, ապա յետ
դարձաւ և ճակատեց Սելևկոսի դէմ, որին յաղ-
թեց. այս յաղթութեան օրն պարթևներն համարում
են իրենց անկախութեան ծննդեան օրն, որ ամե-
նայն տարի տօնուում էր: Անտիոքում ծագած
մի ապստամբութիւն ստիպեց Սելևկոսին յետ
դառնալ իւր մայրաքաղաքը, ուստի պարթևներն
ու Բակտրիացիք ժամանակ ունեցան կազդուրուե-
լու: Տրդատն այդ ժամանակամիջոցը գործ դրաւ
ամրոցների, բերդեր շինելու և զօրքը կազմակեր-
պելու: Սրա շինած քաղաքներից նշանաւոր է
Ապաօրտէնում Դարա կամ Դարայումը: Տրդա-
տը 37 տարի իշխեց և իւր տէրութեան վերջին
ժամանակներն դրամների վրայ սկսաւ իրեն արքա-
յից արքայ կոչել: Տրդատի մահը պէտք է տեղի
ունեցած լինի 211—10-ին, նրա յիշատակը շատ
յարգուած էր պարթևների մէջ:

Սելեկոս Բ.-ին յաջորդեց իւր որդի Սելեկոս Գ. Սոտէր (226—223), որի վաղահաս մահունից յետոյ գահը բարձրացաւ նրա եղբայր Անտիոքոս Գ. Մեծը (223—187): Մարաստանի սատրապ Մոլոնի ապստամբութիւնը քիչ մնաց կրկին քայքայէր Սելեկեան տէրութիւնը, բայց շնորհիւ երիտասարդ Անտիոքոսի եռանդի ու արիւթեան՝ ապստամբն ընկճուեցաւ և տէրութեան ամբողջութիւնն կրկին անխախտ մնաց: Մոլոնին յաղթելու տարին, 220-ին, Անտիոքոսը մի արշաւանք սկսաւ Արտաքացանէսի ընդդէմ, որ իշխում էր Ատրպատականի և արեւելեան Հայաստանի վրայ: Ատրպատականի իշխանութեան սահմանները որոշելու Պոլիբիոսը (V. 55, 7) Փազիսի վերին բաժնի պոնտեան բնակիչների երկիրը սահմանակից է համարում Արտաքացանէսի երկրին, որից հետեւում է որ Ատրպատականի թագաւորները Աղէքսանդրի յաջորդների ժամանակ անկախ տիրում էին Հայաստանի գոնէ արեւելեան հիւսիսային բաժնին: Արտաքացանէսն ընդի իշխանների մէջ ամենից զօրաւորն և եռանդունն էր համարուում: Անտիոքոսի արշաւանքը խորին ծերութեան հասած Արտաքացանէսին այնպէս սարսափահար արաւ, որ նա անմիջապէս համաձայնեց Անտիոքոսին ձեռնառու մի դաշնադրութեան:

Անտիոքոս Գ. մեծութեան հռչակ ստացաւ

այն ժամանակ, երբ իւր տէրութեան արեւմուտքն ապահովելուց յետոյ մի արշաւանք ձեռնարկեց դէպի արեւելեան սատրապութիւնները: Ինչպէս Սելեւկեան տէրութիւնն արեւելքում, այնպէս էլ արեւմուտքում կազմուել էին անկախ տեղական թագաւորութիւններ, որոնցից մէկն էր եւ Արսամիսատայի հայկական թագաւորութիւնը: Անտիոքոսի ժամանակ Արսամիսատայում թագաւորում էր Բսերքսէսը, որի ամուսինը Անտիոքոսի քոյրն էր. սա իւր եղբոր դրոմամբ սպանել էր Բսերքսէսին: Նախ քան դէպի արեւելք արշաւելն, թագաւորը Արսամիսատա դիմեց եւ հայկական այդ փոքրիկ թագաւորութեան գործերը կարգի բերաւ: Այդ տեղից նա դիմեց Նփրատով դէպի հարաւ և ջրի ճանապարհով հասաւ Սելեկիա, որտեղից դէպի Մարաստան անցաւ 209-ին, ուր կողոպտեց Նիբատանի սաճարի հարստութիւնները: Այստեղից արշաւեց Անտիոքոս պարթևաց ընդդէմ, ուր իշխում էր Արշակ Բ. որ յաջորդէլ էր իւր հայր Տրդատ Արշակին: Անտիոքոսի բանակը բաղկացած էր 100,000 հեռեակ և 200,000 հեծեալ զօրքից, որի առաջ խոյս տուին պարթևները: Վրկանում նրանք դէմ դնելու փորձ արին և յաղթուեցան, ուստի և Արշակ Բ. ստիպուեց խաղաղութեան

1. *Sten Ioannes Antiochenus*, Müller IV. 557.

դաշն կռել, որի մէջ նա ստիպուած եղաւ ճանաչելու մակեդոնական գերիշխանութիւնը: 208 թուին Անտիոքոսն արշաւեց բակտրիական աւելի զօրաւոր տէրութեան դէմ, որ սակայն 206 թուին խաղաղութեան դաշինքով վերջացաւ, որից յետոյ Անտիոքոսը հնդկական սահմանակից թագաւորի հետ ևս դաշն դնելով վերադարձաւ իւր մայրաքաղաքը: Այսպիսով Սելևկեան իշխանութիւնն ապահովեց արևելեան կողմից:

Բոլորովին այլ հանգամանքների մէջ սկսաւ Անտիոքոսը 18 տարի յետոյ իւր երկրորդ արշաւանքը դէպի վերին Ասիա: Հռովմի հետ վարած պատերազմներում կրած պարտութիւնը կոտրել էր Սելևկեան իշխանութեան ոյժն ու հռչակը, արևելեան ազգերը զգացել էին մակեդոնական ոյժի նուազումն և աւելի համարձակ էին դարձել իրենց անկախութեան ձգտումների մէջ: Հռովմի անյադ պահանջներն աղքատացրել էին Անտիոքոսին, որ դրամ ձեռք ձգելու համար արշաւել էր Էլիւմայիսի Բելի տաճարը կողոպտելու, որ սակայն պատճառ եղաւ իւր կործանման: Ելիւմայեցիք համախմբուեցան և ոչնչացրին Անտիոքոսի բանակն և իրեն էլ սպանեցին 187 թ: Այս ժամանակներից Էլիւմայիսի փոքրիկ անկախ տէրութիւնը կազմուեց Սուգիանայում: Անտիոքոս Մեծին յաջորդեցին իր որդիքը, նախ թոյլ Սելևկոս Դ. Փիլոպատոսը

(187—175), ապա հանճարաւոր Անտիոքոս Դ. Յուլատոսը (175—174), որ ճանաչել էր իւր տէրութեան թոյլ կողմերն, սակայն իւր եռանդի շատութեան պատճառաւ աւելի ևս փութացրեց տէրութեան կործանումն: Սա ևս դրամի մեծ նեղութիւն էր կրում, ուստի 166 թուին մի արշաւանք սկսեց հարկ հաւաքելու և զանձարանը լցնելու համար: Անտիոքոսը զիմեց նախ դէպի Մեծ Հայք: Հայաստանն առհասարակ Մակեդոնացիներին երբէք կատարելապէս չէ պատկանել, նրա կախումն միայն անուանական է եղել. միայն մեծըն Անտիոքոսի օրով է, որ լսում ենք թէ նա քաժանելով Հայաստանը, Մեծ Հայքում ստրատէգ է կարգում Արտաքսիասին, իսկ Փոքր Հայքում Չադրիադէսին, ըսյց Հռովմի հետ պատերազմելու ժամանակ սրանք յարաբերութիւններ են հաստատում հռովմէացոց հետ եւ նրանց աջակցութեամբ 189 թուին ճանաչուում են իբրեւ առանձին անկախ տէրութիւններ: Աւանդութիւնն հաղորդում է իսկ, որ Անտիոքոսի մօտից փախըստական Հաննիբալը Մեծ Հայքի իշխան Արտաքսիասին է ապաւինում, որ Կարթագենայի զօրավարի յատակագծով շինում է իւր Արտաքսատա—Արտաշատ մայրաքաղաքը, որ յաջորդ դարերում միշտ իբրեւ մայրաքաղաք է յիշուում Հայաստանի: Մեծ Հայքի թագաւորութիւնն քիչ

ժամանակում այնքան զօրանում է, որ տիրում է Մարաստանի գաւառներից Կասալէնէին, Փառնիտեսին եւ Բասորոպէղային. Փոքր Հայքն եւս նենգութեամբ զրեթէ միացում է նրա տէրութեան հետ: Անտիոքոսը մոնում է Հայաստանի խորքը, Արտաքսիասին յաղթում եւ զերի է ըրնում, ըսյց կրկին արծակում է եւ իւր թագաւորութեան մէջ հաստատում:

Այս արշաւանքից յետոյ Անտիոքոսը Պարսկաստան է անցնում, մի քանի յաղթութիւններ է տանում, քաղաքներ է հիմնում եւ հին գաղութներն է վերականգնում, բայց ինքն էլ իւր հօր պէս զոհ է զնում տաճարակապտութեան ժամանակ, որովհետեւ դրամական նեղութիւնը բառնալու համար Ելիւմայիսի Նանէ զիցուհու տաճարը կողոպտելու դիտաւորութեան պատճառով շրջակայ ժողովուրդը ոտքի է կանգնում եւ հալածում է նրան. այս միջոցին լուր է առնում եւ հրէից ապստամբութեան եւ մինչ ինքը պարսիկների դէմ էր արշաւում, մեռնում է թոքախտից 164 թուին: Սրան յաջորդում է մի մանուկ, Անտիոքոս Ե. Եւպատոր (164—162), որին սպանելով թագաւորում է Դեմետրիոս Սոտէր (162—150), որի դէմ Հռովմը շարունակ թշնամիք էր յարուցանում: Մարաստանի սատրապն էր Տիմարքոս Միլետացին, որ նենգաւոր եւ ազգեցիկ գանձապահ Հերակլիդէսի

եղբայրն էր, որ սրա նման նախկին թագաւորի սիրելին էր եղել եւ քանիցս իբրեւ պատգամաւոր Հռովմ էր ուղարկուել: Արդ՝ սա կրկին Հռովմ զնաց եւ Տերակուտի համաձայնութիւնն առաւ թագաւոր կոչուելու (161): Սա դաշն կռեց Մեծ Հայքի արքայ Արտաքսիասի (Արտաշէս) հետ ընդդէմ Դեմետրիոսի, նուաճեց Մարաստանի հարաւային ազգերին, տիրեց մինչեւ Բաբելոն: Բաբելոնիայի ժողովուրդն ատում էր Տիմարքոսին, ուստի երբ Դիմետրիոսը նրա դէմ դուրս եկաւ, ժողովրդի համակրութիւն իւր կողմն ունենալով յաղթեց Տիմարքոսին եւ սպանեց, իսկ նրա եղբայրը փախստեամբ ազատուեց (160): Այս յաղթութիւնը մեծ ոյժ տուաւ Սելեւացիներին, որովհետեւ հռովմէական խոստումներով խաբուողները տեսան կրկին անգամ, որ Հռովմի պաշտպանութիւնն նշանակութիւն չունէր այն երկներում ուր նրա ձեռքը չէր հասնում: Բայց մակեդոնական տէրութեան վտանգ չէր սպառնում ապստամբ կուսակալներից, այլ արեւելեան ազգերից: Այս ազգերից առաջին տեղը պարթեւներին է պատկանում:

Արշակ Բ-ին յաջորդել էր Փրիսպատիոս, որ կառավարեց 15 տարի (191—176), սա դրամների վրայ իրեն կոչում է Արշակ Փիլադելֆոս (եղբայրասէր), Փիլոնէլէն (հելենասէր): Սրան յաջորդում է իւր անդրանիկ որդին Փրասպէս,

որ դրամների վրայ Արշակ Թէոպատոր է կոչուում: Այս թագաւորների ժամանակ պարթևների տէրութիւնն ընդարձակուել էր դէպի Հիւսիս արեւմուտք և հարաւ: Փրատէսն իւր տէրութիւնը յանձնեց (շուրջ 171 թուին) իւր հանճարաւոր եղբայր Միթրիդատէսին (Միհրդատ), որ դրամների վրայ կոչուում է Արշակ Եպիփանէս, այլ և Արշակ Փիլհելլէն: Սա էր այն թագաւորն ահա, որ պարթևների իշխանութիւնն իրանում հաստատեց:

Միթրիդատէսն իւր սահմաններն ընդարձակեց դէպի արեւելք. բակտրիական յոյն տէրութիւնն այդ ժամանակ ներքին կռիւների շնորհիւ տկարացել էր, ուստի և Միթրիդատէսն մի քանի նահանգներ խլեց նրանից մերձաւորապէս 161 թ. Բ.-ից առաջ: Նոյնպիսի յաջող հանգամանքներ նպաստեցին պարթևաց թագաւորին արեւմուտքում, ուր արի Դեմետրիոսի ընդդէմ կռուելով ներքին թշնամիք վերջապէս յաղթեցին նրան (150 թ.) և թագաւորեց Ալէքսանդր Թէոպատոր Եւերգետէսը, որ իրեն Անտիոքոս Եպիփանի որդի էր հռչակել: Եգիպտոսի թագաւոր Պտղոմէոս Փիլոմետորը սրա ընդդէմ զինեց 147-ին Դեմետրիոսի որդուն, երկամեայ պատերազմից յետոյ յաղթելով նրան քչեց (145) և թագաւորեցրեց Դեմետրիոս Բ. Նիկիա-ՏՈՐՈՆ: Սա իւր վարքով ատելի դարձաւ շուտով իւր հպատակներին, ուստի և յաջողութիւն ու-

նեցաւ Դիոդատոսը, որ ստոր ծագումից մի անձն էր և ապստամբութեան դրօշը բարձրացրեց Ապամէայում: Դիոդատոսն իրեն թագաւոր հրատարակեց ՏՐԻԴՓՕ անուամբ և հինգ տարի կռուելով՝ Դեմետրիոսից Ասորիքի մեծագոյն մասը խլեց: Հէնց այս միջոցին ծագեց պարթևաց և մարաց կռիւը: Միթրիդատէսն հեշտութեամբ նուաճեց Մարաստանն ու Բաբելոնիան Սելևկիա մայրաքաղաքով (142—140): Պարթևական լուծը ծանր թուեցաւ այս նահանգների բնակիչներին և նրանք հրաւիրեցին Դեմետրիոսին իրենց օգնութեան: Դեմետրիոսն Ասորիքում այլ ևս կորցնելու բան չունենալով՝ 140 թուին արշաւեց դէպի Միջագետք, ամենուրեք զրկաբաց ընդունեցին նրան, մինչև իսկ բնիկ փոքրիկ թագաւորութիւնները (Պարսից, Ելեմայեցոց և Բակտրիացոց) միացան ասորոց թագաւորի հետ: Սկզբում յաջող գնացին Դեմետրիոսի գործերը, բայց վաւական ճակատամարտում յաղթութեցաւ նա 139 թուին և զերի բռնուեցաւ: Այսպիսով վերջնականապէս ջախջախուեցաւ Սելևկեան իշխանութիւնն իրանում և Միջագետքում ու նրա տեղը բռնեց պարթևական իշխանութիւնը:

Միթրիդատէսն իւր կեանքի վերջին կռիւ միեց և Նիւմայեցոց դէմ, որոնց հարստութեամբ նշանաւոր Նանէի կամ Արտեմիսի տաճարը կողոպ-

(5128/38)

933-2012



տելով, 10,000 տաղանդից աւելի (23 միլ. ռուբլի) գանձ յափշտակեց: Ինչպէս թուում է նա այստեղ Արշակունեաց հարստութեան մի ճիւղի թագաւորութիւնն հաստատեց, որի ներկայացուցիչներէց մէկի անուն յայտնի է մեզ 82 և 81 թուականներէց Բ.-ից առաջ: Այդ թագաւորի անունն է Կամ-նասցիքէս, որ 96 տարի կեանք է ունեցել և որի դրամներն անգամ ունինք մենք:

Միթրիդատէսը մեռաւ 138 թուին փառաւոր ծերութեան հասակում և պարթևաց պատմութեան մէջ տէրութեան հիմնադրին հաւասար հըռ-չակ ունեցաւ, որովհետեւ նա պարթևական տէրու-թիւնն մեծ պետութիւն դարձրեց, հարստացրեց, ընդարձակեց և նուաճուած երկիրները լաւ օրէնք-ներով հաստատուն հիմքի վրայ դրաւ:

Միթրիդատէսի ժամանակ պարթևական տէ-րութիւնն տարածուում էր հնդկական Կովկասից մինչև Եփրատ գետն և Մարաստանից մինչև պարս-կական ծոցը. այս ահագին տարածութիւնն երկու մասի էր բաժանուում, վերին և ներքին. ներքինը կամ արևմտեանն ունէր 7 սատրապութիւն, իսկ վերինը 11, ընդամենը 18: Այս միջոցին պարթե-ւաց հիւսիսային սահմաններում գոյութիւն ունէր դեռ Փոքր Մարաց թագաւորութիւնն, հարաւում Ելիւմայեցոց տէրութիւնն և Պերսիսը, բոլորովին արևմտեան հիւսիսային մասում Արիաբենէի թա-

գաւորութիւնն, որ յիշատակում է 69 թ. և Ռու-հայի թագաւորութիւնն, որ հիմնուել է 132 թ.:

Այս մանր տէրութիւնները ճանաչել էին պարթևաց գերիշխանութիւնն, երբ պարթևները զօրաւոր էին լինում, կարողանում էին պահա-նել և այդ գերիշխանութիւնն, իսկ ելք ներքին պատերազմների պատճառով տկարանում էին, գե-րիշխանութիւնն միայն անուանական էր մնում: Տրդատ Արշակն արդէն մեծ արքայ էր կոչուել, նրան հետեւել էին իւր յաջորդները մինչև Միթ-րիդատէս, որ կոչուեցաւ արքայից արքայ: Այս տիտղոսը աննշանակ մի ածական չէր, այլ շնոր-հուած մի մակդիր, որովհետեւ Միթրիդատէսից յետոյ 70 տարի շարունակ այդ տիտղոսը ոչ ոք չը ստացաւ:

Պարթևաց տէրութեան մէջ թագաւոր նշա-նակուելու գործի մէջ մեծ էր ազնուականութեան ազդեցութիւնը: Թագաւորից յետոյ առաջին տեղը պատկանում էր ծերակուտին, որի անդամներից ընտրուում էին բոլոր զօրավարներն և կուսակալ-ները: Սրանք կոչուում էին թագաւորի տոհմակից-ներ, որ անշուշտ հին պարսկական նախարարներիցն էին ծագել: Բացի այս ծերակուտից կար մի այլ ծերակոյտ, բաղկացած իմաստուններից և մոգերից, որ նոյնպէս մասնակցում էր թագաւորի կարգման: Զնայելով տարածուած թիւր կարծիքներին, պար-

Թեւերը ջերմեռանդ զրադաշտականներ էին, սակայն
հարկաւ ոչ այն աստիճանի, որքան Սասանեան-
ները, որոնց հետ համեմատելով սրանց սխալմամբ
անտարբեր զրադաշտական են համարել: Մակեդո-
նական շրջանը աւարտուած կարելի է համարել
Սելեկեան մեծ պետութեան անկմամբ և Միթրի-
գատէօի պարթևական տէրութեան հաստատու-
թեամբ (138), որի սահմանների մէջ չէր մտնում
սակայն Հայաստանը, որ ինչպէս պատմութեան
շարունակութիւնից կերելի մի անկախ տէրութիւն
էր եւ կարճ ժամանակ (14 տարի) նոյն իսկ գե-
րիշխան դարձաւ առաջաւոր Ասիայում:



Բ.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՆ ՇՐՋԱՆ

Տրատէս¹ Բ-ին յաջորդեց Միթրիգատէս Ա.
138 Զրիստոսից առաջ և շարունակեց իւր հօր սկը-
սած գործերը. սա էր որ սկիւթ աշխարհականների
ձեռքից խլեց Բակտրիոյ Մարգանա նահանգը: Սրա
ժամանակ տեղի ունեցաւ Սելեկեանց վերջին փորձը
կորցրած գերիշխանութիւնը կրկին յետս զրաւելու
համար. այդ ձեռնարկութիւնը պատկանում էր
Անտիոքա Ի-ին, որ Սելեկեանց թագաւորների
շարքում արիագոյնը կարող է կոչուել, և որ վերջ
էր դրել բոլոր ներքին կռիւներին Ասորիքում, թա-
գաւորական իշխանութեան զօրութիւնը վերական-
գընել էր, նոյն իսկ ընկճել էր հրէաներին, առել էր
Շրուսաղէֆն և ստիպել հրէից, որ իրեն զօրք տան:

¹ Դրամների վրայ կոչում է՝ Arsaces Theopator Euer-
getes Epiphanes Philhellen.

Պարթևաց դէմ արշաւեց նա 130թ. 300,000 մար-
դուց բաղկացած մի բանակով, որի մէջ սակայն
80,000 հոգի միայն մարտիկ էին, իսկ մնացեալն
բանակի ազխի պահապաններ ու ծառաներ էին:
Պարթևաց սահմանները մտնելուն պէս բոլոր մանր
թագաւորներն ու նահանգների բնակիչները միացան
Անտիոքոսի հետ, երեք ճակատամարտում յաղթող
հանդիսացաւ և տիրեց մինչև Եկրատան: Պարթև-
ները կրկին իրենց նախկին նեղ սահմանների մէջ փա-
կուեցան: Անտիոքոսն իւր բանակով ձմերեց Մարաս-
տանում, ուր իւր զօրքը մանր զնդերի բաժանեց և
ցրուեց զիւղերն ու քաղաքները: Ասորական զօրքը
իւր խիստ պահանջներով գրգռեց ժողովրդին, որ
և դաւադրութիւն կազմելով մի ժամադրեալ օ-
րուան մէջ յարձակուեց ասորական զնդերի վրայ և
սկսաւ ջարդել. մինչ Անտիոքոսը օգնութեան էր
դիմում իւր զնդերին, պատահեցաւ Փրատէսի
120,000 հոգուց բաղկացած բանակին և ճակատ
տալով՝ պարտութիւն կրեց, ինքը վիրաւորուած
փախստեամբ ազատուեց և թշնամու ձեռքը չընկնե-
լու համար մի ժայռից գահավէժ եղաւ ու մեռաւ:
Այս եղերական վախճանն ունեցաւ Սելևկեանց վեր-
ջին ձեռնարկութիւնն և սկսած 129 թ. աւանդից
Պարթևներն ընդ միշտ ազատուեցան Ասորոց յար-
ձակումներից: Փրատէսը շքով թաղման հանդէս
կատարել տուաւ Անտիոքոսի համար, նրա աղջկանց

մէկին կնութեան առաւ իրեն և անդրանիկ որդուն
Սելևկոսին, ուղարկեց Ասորիք որ իւր հօր գահն
ամբառնայ: Պարթևաց թագաւորը արեւմտեան թըշ-
նամուց ազատուելով՝ մի աւելի զօրաւոր թշնամի
վաստակեց: Անտիոքոսից նեղուելով՝ նա դիմել էր
Սկիւթների օգնութեան առատ վարձ խոստանալով.
սակայն մինչև նրանց հասնելն, արդէն ինքն յաղ-
թել էր թշնամուն, ուստի մերժեց Սկիւթների
վարձը, նրանք էլ արշաւեցին և ասպատակեցին
պարթևաց երկիրն և կողոպտելով հասան մինչև
Միջագետք. Փրատէսը նրանց դէմ ելաւ և կոր
ի գլուխ ջարդուելով սպանուեցաւ ճակատամար-
տում 128 թ.:

Փրատէսին յաջորդեց Փիրապատիոսի եր-
րորդ որդին, ԱՐՏԱՅԱՆՈՍ Բ. (Արտաւան) հաշ-
տութիւն արաւ Սկիւթների հետ, նրանց հարկ
խոստացաւ տալ և հրաժարուեց տէրութեան արե-
ւելեան բաժնում Դրանգիանայի հարաւային բաժ-
նից, ուր Սկիւթներն հաստատուեցան և երկիրն էլ
նրանց անունով սև Սակաստան կամ Սիստան կո-
չուեցաւ: Այս միջոցս մեծամեծ շփոթութիւններ
են տեղի ունեցել Պարթևաց երկրներում, որոնց
մասին պատմութիւնը լռում է, սակայն Արտա-
բանի հակառակ թագաւորող արշակունիների դրամ-
ները վկայ են այդ մասին:

Արտաբանին յաջորդեց իւր որդի Միթրի-

ԴԱՏԷՍ Բ ՄԵԾՆ: Սա պիտի թագաւորած լինի 123 թ. քիչ յետոյ:

Փրատէսի մահուանից յետոյ (127 Ք. ից առաջ) յաջորդեց Փիրապոտիոսի երրորդ որդին՝ Արտաբանոս Ա. (Արտաւան), որ գրամների վրայ կոչուում է Արշակ Թէոպատոր Նիկատոր: Սրա ժամանակ պարթևաց տէրութեան մէջ ներքին երկպառակութիւններ կային, որ գուշակում ենք գրամներից: Արտաւանը պատերազմ մղեց Տոխարացիների դէմ և վիրաւորուելով մեռաւ շատ կարճ միջոց իշխելուց յետոյ:

Սրան յաջորդեց իւր որդին, Միթրիդատէս Բ. ՄԵԾՆ, որ և եղաւ պարթևական տէրութեան վերահաստատողն: Ծիշտ չէ կարելի որոշել Միթրիդատէսի գահ բարձրանալու տարեթիւը. հաւանական է որ այդ տեղի ունեցած լինի 123 թ. Ք.-ից առաջ: Պատմական ընդհանուր ձևով մեզ հասած տեղեկութիւնն ասում է, որ սա շատ պատերազմներ մղեց և յաղթեց սկիւթացիներին մի քանի անգամ. երևում է որ Միթրիդատէսի ջանքն է եղել ձեռք բերել իւր նախորդների կորցրածները. այսպէս նա հաստատեց նախկին արեւելեան սահմանն և արեւմուտքում վերջնական սահման դարձրեց Նիքատը, որ այնուհետև միշտ իբրև պարթևական սահման նկատուեց:

Իւր թագաւորութեան վերջին օրերում այն-

քան զօրացել էր Միթրիդատէսն, որ վստահացաւ խառնուելու Մեծ Հայքի գործերի մէջ: Նախընթաց մի պատերազմից յետոյ Հայաստանի թագաւորն ստիպուած էր եղել իւր որդուն, Տիգրան Բ-ին, պատանդ տալու պարթևներին: Արդ՝ Միթրիդատէսն Տիգրանին թագաւորելու նպաստեց հակառակ Արտաւազդ Ա-ի (հաւանորէն Տիգրանի աւագ եղբորն) եւ գէնքի ուժով հայոց գահի վրայ ըսգմեցրեց սրան 94 թ. Ք.-ից առաջ: Ի տրիտուր այս ծառայութեան Տիգրան պարտաւորուեցաւ պարթևաց թագաւորին տալ Հայաստանից 70 հովիտ:

Իբրև Միջագետքի տէր Միթրիդատէսն յարաբերութիւն սկսաւ Հռովմի հետ և բանաճնացութեան մէջ մտաւ Կիլիկիոյ պրէտոր Սուլլայի հետ 92 թուին: Այս բանաճնացութեան նպատակն էր Ասորիքի մասին ունեցած պարթևական դիտաւորութիւնները, որովհետև այդ միջոցին պարթևները կռիւ էին մղում Կոմմագենի Լաոդիկէա թագուհու հետ, որին օգնում էր Անտիոքոս Ժ.: Բիչ ժամանակ յետոյ պարթևները խառնուեցան Սելևկեանների ներքին կռիւներին և 88-ին գերի բռնուեցաւ Դամասկոսում թագաւորող Դեմետրիոսը, որ Միթրիդատէսի պալատում մնաց ապա մինչև իւր մահը: Այս յաջողութիւնից քիչ յետոյ պէտք է մեռած լինի Միթրիդատէսը:

Միթրիդատէսին յաջորդեց Արտաւան Բ.¹ արանից յետոյ «արքայից արքայ» տիտղոսը սեփականեց իրեն մի ոչ պարթեւ, Տիգրան Բ. Հայաստանի թագաւորը, եւ այնպէս տկարացրեց պարթեւաց զօրութիւնը, ինչպէս ոչ ոք չէր կարողացել: Երբ 86 թուին նրան Ասորիքի մի մասում՝ թագաւոր ճանաչեցին, այդ ընտրութիւնն արդարացնում էին նրանով, որ Տիգրանը դաշնակից էր Պարթեւաց, սակայն շատ չը տեւեց, որ պարթեւներն ներքին եւ արտաքին կռիւների շնորհիւ այնքան տկարացան, որ հայոց հետ էլ համեմատուել կարող չէին:

Պարթեւական այս ներքին շփոթութիւնների միայն վերջին գործողութեան հետ ենք մենք ծանօթ. 77 թուին Սինատրուկէսը Սակարաուկների երկրից եկաւ և թագաւորեց 80 ամեայ հասակում 7 տարի: Սակայն հազիւ թէ սա միակը լինի այն գահ յափշտակողներից, որոնք այդ շրջանում իշխել են պարթեւների երկրում: Այս ժամանակից դրամներ չունինք մենք, որեւ ապացոյց է խառնակ

1. Trogus-ի գրքի մեջ ներս սպրդած մի խանգարման հիման վրայ այսպիսի է դասաւորում Գուսշլիդ պատմական դէպքեր, որովհետեւ „Successores deinde erus Artabanus et Tigranes... situs“ 41. գրքում լինելու փոխանակ պիտի լինէր 42. գրքի մեջ: Այս Արտաւանի են դրամները՝ որոնք կրում են «Արշակ եւեղեցեա Բիշկէլիկն» որոշմը:

Վիճակի: Տիգրանը տիրեց Մարաստանին կամ նրա այն մասին, որ Ատրպատական էր կոչուում, քայց նա մտաւ եւ պարթեւաց պատկանող Մեծ Մարաստանը, աւերեց Ադրապանանը, Եկեքատանի կառավարչի դղեակը, որ միայն 10 հազարամէտը հեռու է Եկեքատանից: Այս քաղաքը Արշակունիների մայրաքաղաքն էր Փրատէս Բ-ից սկսած մինչեւ Միթրիդատէս Գ.: Այն 70 հովիտները, որ Տիգրանը տուել էր երբեմն պարթեւաց թագաւորին ի զին իւր թագաւորելուն, այժմ յետ խլեց: Տիգրանն աւերեց Եփեսոսի եւ Արքելայի շրջակայքն եւս, նա նուաճեց պարթեւաց հպատակ Ադիաբէնէի թագաւորութիւնն եւ Միջագետքը Մծքին ամբողջով: Այս կռիւներից վերջինը Տիգրանը վարեց Սինատրուկի հետ, հաւանօրէն այս կռիւը դեռ շարունակուում էր, երբ պոնտոսի թագաւոր Միթրիդատէս (Միհրդատ) օգնութիւն կանչեց երկու թագաւորներին եւս, քայց իզուր:

Սինատրուկէսին յաջորդեց իւր որդի Փրատէս (Հրահատ) Գ. 70 թուակ. Բր. առաջ: Այս թագաւորն էլ անուշադիր թողեց Տիգրանի եւ Միհրդատի 69 թ. իրեն ուղղած օգնութեան կոչը, չնայելով որ հայոց կողմից իբրեւ օգնութեան վարձ առաջարկուած էին Միջագետքը, Ադիաբէնէն եւ 70 մեծ հովիտները, այսինքն այն բոլոր երկիրները, որ խլուած էին մի ժամանակ պար-

թեւներից: Փրատէսը ոչ միայն չօգնեց Տիգրանին, այլ դաշն կոեց հռոմայեցիների հետ միջնորդութեամբ Լուկուլլոսի ուղարկած ղեսպանների. քայց երբ այդ դաշնադրութիւնը վերջնականապէս հաստատելու համար Լուկուլլոսը ուղարկեց նորա մօտ Սիստինոսին, պարթեւաց թագաւորը սկսեց կասկածել հռոմայեցոց անկեղծութեան վերայ, որովհետեւ Սիստինոսը նորան աւելի լրտես երեւեցաւ, քան թէ ղեսպան: Վերջապէս յարմարագոյն համարեց նա չեզոք մնալ: Պոմպէոսը դեռ չհասած պատերազմի դաշտը դաշն կոեց Փրատէս Գ-ի հետ նոյն պայմաններով, որ առաջարկում էին Միհրդատն ու Տիգրանը. քացի դրանից Պոմպէոսը դրդեց պարթեւաց թագաւորին յարձակումս գործելու Հայաստանի վրայ: Դրա համար այդ միջոցին մեծ յարմարութիւն եւս կար, որովհետեւ Տիգրանի որդի եւ զահակից կրտսեր Տիգրանը իւր հօրից քաժանուել էր եւ փախել պարթեւների մօտ ապաստանել: Փրատէս նրան շատ լաւ ընդունեց, ամուսնացրեց իւր աղջկանց մէկի հետ եւ նրա առաջնորդութեամբ մի արշաւանք ձեռնարկեց դէպի Հայաստան 66 թ.: Ժերոնի Տիգրանը փախաւ դէպի լեռները, պարթեւները հասան մինչեւ Արտաշատ եւ պաշարեցին քաղաքը, քայց որովհետեւ պաշարումը երկարեց, ուստի Փրատէսը յետ դարձաւ իւր զօրաց մի մասը թողնելով կրտսեր Տիգ-

րանի մօտ: Սա միայնակ չէր կարող իւր հօր դէմ դնել. մի կատարեալ պարտութիւն կրելուց յետոյ փախաւ Պոմպէոսի մօտ, որ պատրաստուում էր Հայաստան մտնելու: Հայր Տիգրանը անպայման անձնատուր եղաւ Պոմպէոսին եւ հակառակ իւր սպասածին յաջող պայմաններ ստացաւ: Պոմպէոսը նորան յանձնեց իւր ապստամբ որդուն առանց որ եւ է պայմանի, որին ապա Տիգրանը կապանքների մատնեց: Փրատէսը, որ այդ միջոցին տիրել էր այն երկիրներին, որ երբեմն պատկանում էին պարթեւներին եւ որ հռոմայեցիք դաշնադրութեամբ պարթեւներին էին թողել, ուղարկեց ղեսպաններ Պոմպէոսի մօտ, իւր փեսայի համար միջնորդութիւն անելու (65): Բայց Պոմպէոսը կարիք չունենալով այլ եւս պարթեւական դաշնակցութեան, մերժեց Փրատէսի խնդիրը եւ ընդհակառակն պահանջեց, որ պարթեւները դուրս գան Կորդուէնէից. քայց որովհետեւ պարսիկ ղեսպանները այդ մասին հրահանգ չունէին, ուստի ինքը թուղթ գրեց Փրատէսին, եւ առանց այդ թղթի պատասխանին սպասելու, Աֆրիանոս զօրավարի միջոցով դուրս վճռեց Կորդուէնէից պարթեւաց զօրքը եւ երկիրը յանձնեց Տիգրանին: Աֆրիանոսը պարթեւներին հալածեց մինչեւ Արեւիտիս եւ ապա Միջագետքով դարձաւ դէպի Ասորիք, չնայելով որ դաշնադրութեամբ Միջա-

գետքը պատկանում էր պարթեւներին: Պոմպէոսը
 իւր թղթի մէջ գլացել էր Փրաստէսին «արքայից
 արքայ» տիտղոսը, չնայելով որ առաջ հռովմայե-
 ցիք ընդունել էին Փրաստէսի «արքայից արքայ»
 լինելը: Պոմպէոսը այդպէս էր վարուել անշուշտ
 ի յարգանս Տիգրանի, որ ինքն իրեն միակ «ար-
 քայից արքան» է համարում, որի այդ իրաւունքը
 ճանաչել էին եւ Փրաստէսի թոյլ նախորդները:
 Այն չորս թագաւորներից, որոնց հպատակութեամբ
 «արքայից արքայ» տիտղոսին էր արժանացել Տիգ-
 րանը, մենք ճանաչում ենք երեքին, այն է՝ Ատր-
 պատականի Ադիաբէնէի եւ Կորդուէնէի թագաւոր-
 ներին: Զորորդը երեւի Ուռնայի թագաւորն էր.
 այս բոլոր երկիրներն էլ մի ժամանակ պարթե-
 ւներին էին հպատակ, ուստի երբ Փրաստէսը
 պարթեւաց տէրութեան այս կորուստները եւ
 մանաւանդ այս փոքրիկ թագաւորութիւնները կրկին
 պարթեւական իշխանութեան տակ նուաճեց՝
 իրեն սեպհականեց «արքայից արքայ» տիտղոսը,
 ինչպէս այդ ցոյց են տալիս նորա դրամները:
 Պարթեւաց թագաւորներից վերջինը Միհրդատ
 առաջինն էր, որ Տիգրանից առաջ կրում էր այդ
 տիտղոսը: Փրաստէսի դրամների վրայ հետեւեալ
 վերնագիրը կայ. «Արքայից արքայ Արշակ Դիկա-
 յոս Եպիփանէս Թէոս Եւպատոր Փիլիսէն»: Զը-
 նայելով Պոմպէոսի արհամարհական վարմունքին

Փրաստէսը նախ մի դեսպանութիւն ուղարկեց,
 պահանջելով դաշնադրութեամբ որոշուած Եփրատի
 սահմանագիծն ընդունել, ըսյց Պոմպէոսից ստացաւ
 մի յանդուգն պատասխան: Երբ Պոմպէոսը Ատ-
 րիքումն էր 64 թ. զարնանը, Փրաստէսը արշաւեց
 Տիգրանի դէմ ու յաղթեց նորան. զուր տեղը
 Տիգրանը դիմեց Պոմպէոսի օգնութեան, որ պա-
 տասխանեց թէ իրան իրաւունք տուած չէ Պար-
 թեւների դէմ պատերազմ դուրս գալու, ինքն էլ
 կարող չէ մի այդպիսի պատերազմի պատասխա-
 նատուութիւնն յանձն առնել, քանի որ Միհրդատն
 ընկճուած չէ: Այսուամենայնիւ երբ Փրաստէսն էլ
 դեսպաններով միջնորդութեան դիմեց, Պոմպէոսը
 երեք մարդ ուղարկեց այդ վէճը վճռելու համար:
 Տիգրանը եւ Փրաստէսը այնքան խոհեմ գտնուե-
 ցան, որ ընդունեցին հռովմայեցիների վճիռը: Հռով-
 մայեցիք այս բոլոր պատերազմների ընթացքում
 զրգոել էին պարթեւներին, ըսյց պարթեւները
 այնքան տկարացած էին որ կարող չէին պատե-
 րազմ սկսել Հռովմի դէմ: Պարթեւական տէրու-
 թիւնը հազիւ ներքին եւ արտաքին պատերազմնե-
 րից ազատուել էր եւ սկսել էր կազդուրուել:

Հարիւր յիսուն տարուց աւելի անել էր
 Արշակունիների տան մէջ ներքին համաձայնու-
 թիւնը, որպիսի օրինակ չկայ արեւելեան բռնակալ-
 ների հարստութեանց մէջ: Այսուամենայնիւ Արշա-

կունեաց ասն մէջ ևս սկսեց երևիլ դէպի վաւր
գնալու ձգտումը, որ յատուկ էր բոլոր արեւելեան
բռնակալութիւններին: Փրաատէս Գ-ը, որին պար-
տական էին պարթեւները իրանց տէրութեան վերա-
կանգնումը, սպանուեցաւ 57 թ. իւր երկու որ-
դոց ձեռքով: Սրանցից Որոդէս կամ Հիւրոդէս
առաջինը ժառանգեց պարթեւական դահլ, իսկ նրա
եղբայր Միհրդատ Գ-ը թագաւորեց Մարաստա-
նում: Դրամներ զրայ Որոդէս կոչուում է՝ «Որո-
դէս արքայից արքայ», իսկ Միհրդատը՝ «մեծ ար-
քայ»: Սրան իւր անգթութեան համար պարթեւ
աւագանին վռնտեց Մարաստանից և Որոդէսը մնաց
միակ թագաւոր: Միհրդատը փախաւ Ասորիքի կու-
սակալ Գաբինիոսի մօտ, որ Եփրատն անցել և
Միհրդատին գէնքի ուժով իւր գահի վրայ էր ու-
ղում հաստատել, երբ հրաման ստացաւ Պոմպէոսից
դառնալ Եգիպտոս և իւր գահի վրայ բազմեցնել
Պտղոմէոս ԺԱ.-ին, որին այնտեղից դուրս էին քշել:
Գաբինիոսը Միհրդատից ազատուելու համար
յայտնեց նրան, որ բանակից հեռանայ, իսկ զինուոր-
ներին յայտարարեց, որ նա փախել է: Միհրդատը
միայնակ փորձեց եւր բազդը և կարողացաւ գահը
խլել Որոդէսից, սակայն այս յաղթութիւնը եր-
կարատեւ չեղաւ, որովհետեւ Որոդէսին օգնեց պար-
թեւաց թագադիր նախարարութեան նահապետ
Սուրէնը, որին անձնատուր եղաւ Միհրդատը:

Որոդէսը իւր իսկ աչքի առաջ սպանել տուաւ
եղբորը:

Այս դէպքերը երկարել էին մինչև 54 թ.,
երբ յանկարծ պարթեւական հողի վրայ երևեցաւ
առանց որ և է պատճառի, միմիայն աւարի յուսով՝
Կրասոս հռովմայեցի զօրավարը: Թեթեւ յաղթու-
թիւնից յետոյ Կրասոսը Ասորիքում ձմեռեց եւ
յաշորդ տարին պատերազմ սկսելով Հնդկեանց
իւր դաշնակցի՝ հայոց Արտաւազդ Բ. թագաւորի
խորհրդին, որ հրաւիրում էր նորան Հայաստանի
վրայով յարձակուել պարթեւաց տէրութեան վրայ,
խոստանալով հռովմայեցի զօրավարին ամեն տե-
սակ օգնութիւն: Կրասոսը ձմեռոցներից նոր էր
դուրս գալիս, երբ պարթեւ դեսպանները եկան յի-
շեցնելու նորան իւր անիրաւ վարմունքը, որ ա-
ռանց հետեւանքի մնաց: Պարթեւները ձմեռը պատ-
րաստուել էին, Սուրէն զօրավարը Միջագետքից
քշել էր սակաւաթիւ հռովմայեցի պահակներին և
մեծ հեծելազօրքով դիմում էր Կրասոսի դէմ:
Որոդէս թագաւորը արշաւեց Հայաստանի վրայ, որ
Արտաւազդին պատժէ հռովմայեցիներին առաջար-
կած օգնութեան համար, եւ թոյլ չտալ խոստա-
ցած օգնութիւնը հասցնելու: 53 թ. յունիսի 6-ին
Միջագետքում տեղի ունեցաւ այն մեծ ճակատա-
մարտը, որի մէջ Սուրէնը մեծ յաղթութիւն տա-
րաւ հռովմայեցոց վերայ, նոցա զօրքից սպանելով

մօտ 20 հազար մարդ, որոնց մէջ Կրասոսի որդուն, իրեն Կրասոսին, 10 հազար հոգի էլ գերելով: Սուրէնը Կրասոսի գլուխը և ձեռքը ուղարկեց Հայաստան Որոգէս թագաւորին. յաղթութեան նշանը հասաւ այն ժամանակ, երբ Որոգէս խաղաղութիւն էր հաստատել Արտաւազդի հետ և տօնում էր նրա քրոջ հարսանիքը իւր աւագ որդի Բակուրի հետ: Կրասոսին յաղթող Սուրէնի վիճակը շատ դառն եղաւ, որովհետեւ Որոգէսը վախենալով նրա մեծ հռչակից, հրամայեց սպանել նրան: Պարթևները չկարողացան իրենց յաղթութիւնից օգուտ քաղել. 52 թ. միայն մի փոքրիկ բանակ ուղարկեցին Ասորիք, որտեղից նրանց հեշտութեամբ յետ վանեց Կասիոսը: Միայն յաջորդ տարին մի մեծ բանակ ուղարկեցին պարթևները արքայորդի թագաւորի և Օզակէս զօրավարի առաջնորդութեամբ դէպի Ասորիք, ուր հռովմայեցիք շատ քիչ գնդեր ունէին և տեղացի ժողովուրդն էլ դժգոհ էր հռովմէական խստութիւնից: Սեպտեմբերին 51 թ. Կասիոսը մի փոքրիկ յաղթութիւն տարաւ պարթևների վերայ, որին զոհ գնաց և Օզակէս: Բակուրը ձմեռեց Ասորիքում և Միջագետքի սատրապ Օրօնդապատէսը դժգոհ Որոգէսից ապստամբեց և Բակուրին թաղաւոր հռչակեց, որից կասկածելով Որոգէսը յետ կանչեց նորան իւր զօրքով: Այսպիսով 50 թ. յուլիս ամսին Ասորիքը մաք-

րուեցաւ բոլորովին պարթևներից:

Հօր և որդու երկպառակութիւնը հաշտութեամբ վերջացաւ. Որոգէսը Բակուրին իրեն դահակից նշանակեց, այսուամենայնիւ պարթևները չօգտուեցան հռովմայեցւոյ տէրութեան նեղ վիճակից, թէպէտ և ներքին կռիւների ժամանակ պարթևները օգնութեան էին հասնում թոյլ կուսակցութեանը, որպէս զի նա ոյժ ունենայ կռիւը երկարացնելու, սակայն այդ օգնութիւնն էլ այնքան աննշան էր, որ չէր կարողանում իւր նպատակին հասնել:

Եռապետութեան անդամների ներքին կռիւների ժամանակ էլ պարթևները չկարողացան հանգամանքից օգուտ քաղել, միայն 40 թուականին Որոգէսը լսելով իրեն ապաստանած հռովմայեցի Զուինտուս Լաբիենոս զօրավարին՝ մի մեծ բանակ ուղարկեց նորա և Բակուրի առաջնորդութեամբ դէպի Ասորիք: Պարթևական բանակը նուաճեց ամբողջ Ասորիքը: Բարգափրան սատրապը մուտք գործեց Պաղեստին և մեծ ուրախութեամբ ընդունուեցաւ հրէաներից, որոնք դժգոհ էին Հերովդէսի կառավարութիւնից: Բարգափրանը Երուսաղէմում թագաւորեցրեց Անտիգոնոսին: Բակուրը իւր մեղմ կառավարութեամբ սիրելի դարձաւ նուաճած երկրներում: Լաբիենոսը յառաջ խաղաց, տիրեց Նիլիկիային և փոքր Ասիային, բայց

երբ 39 թ. Անտոնիոսի զօրավար Վինտիլիոս Բասուսը նրա դէմ ելաւ, ստիպուեցաւ յետ նահանջել մինչև Տորոս, ուր Բասուսը յաղթեց պարթեական բանակին, ցրուեց Լաբիենոսի նոր ժողոված լէգէոնները: Լաբիենոսը փախաւ Կիլիկիա և բռնուելով զլիսատուեցաւ: Մի երկրորդ ճակատամարտում՝ պարթեաները կրկին յաղթուեցան և ստիպուեցան թողնել Ասորիքը և Պաղեստինը. պարթեաների և Հռովմայեցւոց երրորդ ճակատամարտը տեղի ունեցաւ 38 թ. յունիսի 9-ին և վերջացաւ պարթեաների կատարեալ պարտութեամբ: Բակուրը ընկաւ այս ճակատամարտի մէջ: Սրանից յետոյ Ասորիքն ու Պաղեստինը կրկին ընկան Հռովմայեցւոց իշխանութեան ներքոյ:

Որոգէսը իւր սիրելի որդու մահուամբ սաստիկ ընկճուեցաւ: Բակուրի տեղը նա թագաւոր կարգեց իւր երկրորդ որդի ՓՐԱՍՏԷՍԻՆ, որ իւր եղբայրներին սպանել տուաւ և այդ բանի մասին հօր զժգոհութիւնը լսելով, նրան էլ հրամայեց խեղդել 37 թ. Որոգէսը պարթեաց թագաւորութեան զօրութիւնը հասցրեց իւր գաղաթնակէտին: Նա իւր զրաֆների վերայ կոչում է իրեն «Արքայից արքայ Արշակ Եւերգետէս Դիքայոս Եպիփանէս Փիլհելէն»։ Հելլենասէր տիտղոսը կրում էր նա իրաւամբ, որովհետեւ խօսում էր յունարէն և հետաքրքրուում յունական գրականութեամբ, մինչև

անգամ իւր որդու հարսանիքի ժամանակ Արտաշատում ներկայացնում էին Եւրիպիդէսի կատակերգութիւններից մէկը: Որոգէսը պարթեական տէրութեան մայրաքաղաքը դէպի արևմուտք փոխադրեց, և սրա ու Բակուրի ժամանակն էր, որ Տիգրեոնը տէրութեան իսկական մայրաքաղաքը դարձաւ:

Փրատտէս Դ-ը իւր թագաւորութիւնը սկսեց կոտորելով իւր եղբայրներին և սպանել տալով նոյն իսկ իւր որդուն: Նրա անգթութիւնից երկիւղ կրելով աւագանին, սկսաւ փախչել օտար երկիրներ: Անտոնիոսը յարմար ժամանակ համարելով պարթեաներին ընկճելու, պատրաստուեց յարձակումի գործելու նրանց վրայ: Պարթեաց տէրութեան հիւսիսային կողմից սահմանակից մանր տէրութիւնների յարաբերութիւնները հետեւեալ կերպով էին կազմակերպում. 67 թ. Ատրպատականի Մարաստանում թագաւորում էր Տիգրանի փեսայ Միհրդատը նրա գերիշխանութեան ներքոյ, 65 թ. Միհրդատի յաջորդող Դարեոնը հպատակութիւն էր յայտնել Պոմպէոսին, իսկ քիչ յետոյ Հայաստանի հետ միասին Ատրպատականն էլ ընկել էր պարթեական գերիշխանութեան ներքոյ: Մինչեւ Բակուրի մահը Հայաստանը մնաց պարթեաց գերիշխանութեան տակ, իսկ ապա կրկին ծանաչեց հռովմէական գերիշխանութիւնը: Անտոնիոսը համոզուած լինելով, որ Եփրատի սահմանը

դժուար է անցնել, վճռեց Հայաստանի վերայով
յարձակումն գործել նախ Ատրպատականի եւ
ապա ըսն Պարսկաստանի վերայ: Մինչ խաղա-
ղութեան քանակցութիւններով զբաղեցնում էր
պարթեւաց թագաւորին, 36. թ. մտաւ Հայաս-
տան, որտեղից օգնական առաւ 6 հազար հայ
հեծելազօր, մտաւ Ատրպատական, պաշարեց
Փրասպա մայրաքաղաքը, ուր ապաւինել էին Ա-
րիւրարզանէսի որդի Արտաւազը թագաւորի կա-
նայքը եւ որդիքը: Մարաց Արտաւազը թագաւորը
գնացել էր Փրասպէսին օգնութեան: Պարթեւաց
թագաւորը հագիւ 40 հազար զօրը ունէր դէմ
դնելու հռովմայեցիներին: Փրասպէսն ու Արտա-
ւազը յարձակուեցան Անտոնիոսի վերջապահ
գնդի վերայ եւ ջարդեցին 7,500 մար: Հայոց թա-
գաւոր Արտաւազը այնպիսի սարսափ զգաց այս
հռովմէական պարտութիւնից յետոյ, որ իւր 13
հազար մարդուց քաղկացած քանակով յետ փա-
խաւ դէպի Հայաստան, առանց անգամ փորձ
փորձելու Անտոնիոսի քանակին միանալու: Պար-
թեւաց բանակի շարունակ յարձակումներէից ստի-
պուած, Անտոնիոսը բանակցութիւն սկսեց Փրա-
սպէսի հետ, որ թոյլ տայ իրեն զօրքով միասին
յետս նահանջելու. թէպէտ և Փրասպէսը համա-
ձայնուեց, բայց երբ Անտոնիոսը պաշարումը վեր-
ցրեց և սկսեց յետս նահանջել, Փրասպէսը հա-

լածեց նրան մինչև Հայաստանի սահմանը՝ մեծ
կորուստներ պատճառելով: Անտոնիոսի բանակը
կիսով չափ սպառուած, հիւանդութիւնից, սովից
և ցրտից նեղուած, մտաւ Հայաստան եւ անշուշտ
բոլորովին կշնջուէր, եթէ Արտաւազը թագաւորը
իրաւունք տուած չլինէր Հայաստանում ձմերելու:
Հռովմայեցւոց այս պարտութեան զլխաւոր պատ-
ճառն իրենց աշխարհաբախտ տգիտութիւնն էր
և Անտոնիոսի շուտափոյթ պատերազմական ձեռ-
նարկութիւնները, սակայն նրանք միշտ սովոր են
եղել մեղքն ուրիշի վրայ ձգելու, այս անգամ էլ
իրենց պարտութեան պատճառ համարեցին Հայոց
Արտաւազը թագաւորին:

Հռովմէական բանակի աւարը բաժանելու մի-
ջոցին, Մարաց Արտաւազը թագաւորի բաժինը
քիչ ընկաւ, ուստի և նա դժգոհ Փրասպէսից,
բանակցութեան մէջ մտաւ 35 թ. Անտոնիոսի
հետ: Երբ Անտոնիոսը խորամանկութեամբ Հայոց
թագաւոր Արտաւազին, որ իւր թէ իրեն դաւա-
ճանել էր, գերի բռնեց եւ Հայաստանը նուաճեց
33 թ., Արաքսի ափին տեսակցութիւն ունեցաւ
Մարաց Արտաւազի հետ, եւ դաշն կոեց. Հայաս-
տանի արեւելեան մի մասը նրան տուաւ, հռովմէա-
կան օգնական զնդեր ուղարկեց նրան պարթեւաց
ընդդէմ, որի փոխարէն ինքն էլ Մարաց զնդեր
ստացաւ Ոկտաւիանոսի դէմ: Պատերազմի միջո-

ցին հայոց թագաւոր Արտաւազդի որդի Արտաւ-
սիսա կամ Արտաշէս Բ-ը ազատուելով Անտոնիոսի
ձեռքից՝ փախել էր պարթեւաց թագաւորի մօտ,
որ պարթեւական զօրքով յետ էր բերել նրան
Հայաստան թագաւորեցնելու: Մարաց թագաւորը
օգնութեամբ հռովմէական զնդերի յետ վանեց
պարթեւներին: Սակայն երբ Անտոնիոսը Ակցիումի
ճակատամարտի ժամանակ յետ կանչեց իւր զն-
դերը առանց Մարաց զօրքերը յետ ուղարկելու,
Արտաւազդը անօգնական մնաց, յաղթուեց պար-
թեւներից եւ գերի ընկաւ նոցա ձեռքը: Մարաս-
տանն ու Հայաստանը կրկին ընկան պարթեւաց
գերիշխանութեան ներքոյ, հռովմէական պահակ
զօրքը Հայաստանում շարդուեցաւ եւ Արտաշէս
Բ-ը բարձրացաւ իւր հայրենի գահը 32 թ. Բրի-
տոսից առաջ: Մի տարի յետոյ, պարթեւաց տէ-
րութեան ներքին խռովութիւնների միջոցին, Մար-
աց Արտաւազդ թագաւորը փախաւ եւ ապաւի-
նեց հռովմայեցիներին, իսկ Հայոց Արտաշէս թա-
գաւորը յոյս չունենալով պարթեւաց պաշտպա-
նութեան վերայ՝ բարեկամութեան դաշն հաստա-
տեց հռովմայեցիների հետ:

Փրատեսի անդթութիւնների պատճառով
ներքին խռովութիւններ բարձրացան Պարսկաստա-
նում 33 թուականից մինչեւ 27 թ. Փրատեսի
հակառակ թագաւորից Տիրիդատէս Բ-ը, որ նախ

պարտութիւն կրելով ապաւինեց հռովմայեցիներին,
այնտեղից կրկին յարձակուեց պարթեւաց տէրու-
թեան վերայ եւ Փրատեսին հալածելով թագա-
ւորեց նրա փոխանակ: Փրատէսն ապաւինեց
Սկիւթացւոց եւ նրանցից օգնութիւն գտնելով 26
թ. յուլիսին կրկին նստաւ իւր գահը:

ՀՌՈՎՄԱ.—ՊԱՐԹԵՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ.

Փրատէս Դ-ի երկրորդ անգամ զահակաւու-
թիւնն առիթ եղաւ հռովմայեցիների պարթեւական
զօրժերին խառնուելուն. Օգոստոս կայսրը բռնեց
Փրատեսի կողմն եւ դրա փոխարէն ստացաւ նրա-
նից Պրատոսի եւ Անտոնիոսի պարտութեան ժամա-
նակ պարթեւների ձեռքն անցած դրօշներն ու զե-
րիք: Այս դէպքը տեղի ունեցաւ 20 թուին
Բրիտտոսից առաջ, երբ Օգոստոսը Ասորիքումն
էր: Ներքին խռովութիւնները տեւեցին Պարս-
կաստանում մինչեւ 9 թ. Բրիտտոսից առաջ.
այդ միջոցին Փրատեսի փոխանակ երեք տարու-
չափ իշխեց Միթրիդատէս Դ. նոյն ժամանա-

կում ինքնուրունութիւն ձեռք բերին և Մարքոսինք Հռովմից խնդրեցին և ստացան իրենց Արտաւազդ թագաւորի որդի Արիոբարզանէս Բ-ին, իբրեւ թագաւոր: Փրատէսը երրորդ անգամ գահակալեց 10—9 Քրիստոսից յետոյ և երկիւղ կրելով ներքին խռովութիւններէց, իւր 8 որդիքն ու երկու կանայքը Հռովմ ուղարկեց իբրեւ պատանդ, Պարսկաստանում մնաց միայն մի իտալական ստրկուհու, Թէա Մուզա Ուրանիայի մանկահասակ որդին, որ գահաժառանգ էր նշանակուած: Սա էր որ իւր մօր սաղրանօք սպանեց Տօրն ու նրա տեղը թագաւորեց:

Նոր թագաւորած Փրատէս Ե. կամ ինչպէս սովորաբար կոչուում է Փրատաւէսը նպատեց հայկական ապստամբութեան ընդդէմ Արտաւազդ Գ.-ի որ Հռովմէացոց պաշտպանեալն էր: Հայերը պարթեւաց օգնութեամբ դուրս վնդեցին իրենց երկրից Արտաւազդին եւ նրա պաշտպան հռովմէական զունդն եւ թագաւորեցրին պարթեւաց Տիգրան Դ-ին: Նոյն միջոցին Մարաստանից արաքսուեցաւ և Արիոբարզանէս Բ., Օգոստոս կայսրը արևելեան գործերը կարգի բերելու համար ուղարկեց իւր թուռն Գայիոս կեսարին դէպի Ասորիք. Հայոց թագաւոր Տիգրան Դ. շտապեց հռովմէացոց հետ հաշտուելու եւ նրանցից թագաւոր ամանաչուեցաւ: Փրատէսն եւս խաղաղութեան

դաշն կոեց Գայիոս կեսարի հետ: հրաժարուելով Հայաստանի գերիշխանութիւնից (1. Քրիստոսից յետոյ):

Փրատէսը երկար չիշխեց, 4 թուին Քրիստոսից յետոյ տեսնում ենք նրան Հռովմէական սահմաններում, ուր իւր երկրից հալածուած մեռաւ: Սրան յաջորդեց Որոդէս Բ. արքայից դառնալով, իւր անազորոյն բարքի համար ատելի դարձաւ և որսի ժամանակ սպանուեցաւ (6. Քրիստ. յետոյ):

Պարթեւները դեսպաններ ուղարկեցին Հռովմ և Օգոստոսից խնդրեցին որ Փրատէս Գ.-ի որդիներէց մէկին իրենց վրայ թագաւորեցնէ. ընտրուեցաւ Փրատի աւագ որդին, Վոնոնէսը, որ իւր կրթութեամբ բոլորովին խորթացել էր պարթեւներէ, ուստի շուտով ատելի դարձաւ և նրա փոխանակ թագաւորական գահին տիրելու հրաւիրուեցաւ Ատրպատականի արքայ Արտաբանէս, որ մայրական կողմից արշակունի էր (10 Ք. յ.): Վոնոնէսը յաղթուեցաւ (16 թ.) եւ փախաւ Հայաստան, ուր հէնց այդ միջոցին անիշխանութիւն էր, ուստի եւ ժողովուրդը նրան թագաւորեցրեց:

Արտաբանէս Գ. չէր կարող թոյլ տալ, որ իւր հակառակորդը հարեան երկրում թագաւորէ, ուստի պատերազմ սպառնաց Հռովմէացոյ, եթէ մտադիր լինէին պաշտպանել Վանոնէսին: Տիքերիոս

կայսրը խաղաղութիւն էր ցանկանում, ուստի զիջաւ մանաւանդ երբ տեսաւ, որ Վասպուրականի եւ Բագրեւանդի ազատանին Արտաքանի կողմն է: Վոնոնէսը թողեց Հայաստանն եւ անցաւ նախ Ասորիք եւ ապա Արտաքանի պահանջմամբ քաշուեց Կիլիկիա, որտեղից փախստեան մի անյաջող փորձ անելու միջոցին սպանուեցաւ (19 թ.):

Պարթևների իշխանութիւնը քայքայուում էր, տէրութեան զանազան ծայրերում անկախ իշխանութիւններ էին կազմում, արքայից արքան շարունակ պատերազմներ էր մղում ապստամբների դէմ: Արտաքանէսը ոչ միայն ապստամբներին ընկճեց, այլ և կարողացաւ հարեան ազգերին երկիւղ ազդել: Հայաստանում թագաւորեցրեց իւր անդրանիկ Արշակ որդուն և հռովմէացիներից սկսաւ Կապադովկիան անգամ պահանջել, որովհետեւ այնտեղ իրանեան ազգեր էին բնակում:

Առաջին դարում հռովմա—պարթեւական բռնորդ պատերազմների սկզբնապատճառն Հայաստանի վրայ ունենալիք գերիշխանութիւնն է: Հռովմի կայսրներից ամենախաղաղասէրն անգամ չէր կարող թոյլ տալ, որ պարթեւների գերիշխանութիւնը զանազուէր Հայաստանի վրայ, ուստի Տիբերիոսը Արտաքանի դէմ նոր թշնամիք յարոյց: Վրաց (Իբերացոյ) Փարսամանէս թագաւորին հռովմայեցիք ղրդեցին, որ իւր եղբորը Միթրիդատեսին

Հայոց զահի ժառանգ ներկայացնէ: Արշակին սպանեցին իւր կաշառուած ծառայքը, վրացիք հեղեղեցին երկիրը իրենց հրոսակներով եւ տիրեցին Արտաշատ մայրաքաղաքին (35 թ.): Երբ դրանից յետոյ Արտաքանը իւր միւս որդուն, Որոդէսին, զօրքով Հայաստան ուղարկեց իւր եղբոր սպանման վրէժն առնելու եւ նրա զահը ժառանգելու, Փարսամանէսը դաշն կոեց Ալեքանդրի (Աղուանից) թագաւորի հետ եւ ձեռնարկեց մի այլ աւելի վրտանգաւոր զօրձ, որի շնորհիւ վրաց թագաւորները միշտ կարողացել են, չնայելով իրենց ջնջին ուժերին, մեծ դեր խաղալ.—նա քաց արաւ Կովկասեան դռներն հիւսիսային Սարմատների, կամ ինչպէս այլք կոչում են Ալանների, առաջ, որոնք դրամով եւ աւարով հեշտութեամբ էին գրաւում: Այս վայրենի հրոսակները յարձակուեցան Հայաստանի վերայ: Որոդէսը դէմ դուրս եկաւ նրանց եւ մենամարտութեան մէջ վիրաւորուեցաւ Փարսամանեսից, երբ զօրքի մէջ տարածուեց արքայորդու մահուան սուտ լուրը, զօրքը ցիւրուցան եղաւ: Մինչ Արտաքանէսը յաջորդ 36 թուին նորից կամենում էր պատերազմի քախտը փորձել Հայաստանում, իւր յետեւը դժգոհ պարթեւների կուսակցութեան եւ Տիբերիոսի ձեռքով պատրաստած խաղաղամանքն երեւան եկաւ: Դժգոհների պարազլուին էր հարուստ ու զօրաւոր Միննակէսը:

որ Տիրերիոսից խնդրել ու ստացել էր պատանդ արշակունիներից մէկին, Փրաատէս Դ-ի որդի-Փարատեսին, իբրեւ պարթևաց թագաւոր: Սա շուտով մեռաւ և նրան փոխարինեց Փրաատէս Դ-ի թոռներից մէկը Տիրիգատէս անունով:

Մեծամեծներն միմեանց ետեւից թողին Արտաբանին և միացան նրա հակառակորդի հետ: Արտաբանէսը բարւոք համարեց ազատակամ քաշուել ասպարիզից և գնալով Վրկանաց աշխարհը, նորոգեց իւր հին յարաբերութիւնները հարեան թափառական ազգերի հետ:

Տիրիդատէս Գ. հռովմէական զօրքերով յառաջ խաղաց և օրեց արեւմտեան նահանգներին, Տիգրոն մտնելուց յետոյ շուտով թագ կապեց առանց սպասելու զօրաւոր արեւելեան սատրապների գալստեան, որով և նրանց թշնամեցրեց իւր հետ: Դժգոհները կրկին հրաւիրեցին Արտաբանէս Գ-ին, որ Դահերից և Սակերից կազմուած բանակով եկաւ ու առանց պատերազմի զրաւեց իւր գահը: Տիրիգատէսը ապաստանարան գտաւ Ասորիքում (36 թ.): Հռովմէացոց հետ հաշտութեան դաշն կռեց Արտաբանէս և իւր որդի Դարեհին ևս պատանդ տուաւ: Մի նոր դաւադրութիւնից խոյս տալով՝ Արտաբանէս ապաւինեց Ագիաբենի իզատէս թագաւորին: Պարթևների վրայ թագաւորեց Արտաբանեսի որդեգիր Կիննա-

մոս, որ ապա ինքնակամ տեղի տուաւ Արտաբանեսին: Իզատէս թագաւորը վարձատրուեցաւ իւր հաւատարմութեան համար, բացի մի քանի պատուոյ նշաններից, նա ստացաւ եւ Մծքին քաղաքը, որ իլեց Հայոց թագաւորից: Հայաստանը կրկին ընկել էր պարթեւաց ճեղքը շնորհիւ Գայիոս կեսարի անմոռութեան, որ Հայոց թագաւոր վրացի Միթրիդատեսին հռովմ էր կանչել եւ գերութեան մէջ էր պահում: Արտաբանէսը հաւանօրէն մեռաւ 40 թ.-ին:

Նոյն թուին թագաւորեց Արտաբանեսի որդի Վարդանէսը, սրա փոխանակ 41 թուին թագաւորում է Գոտարցէսը, որ իւր անդթութեան պատճառով հալածուում և կրկին Վարդանէսն է թագաւորում (42. յուլիս): Մինչ Վարդանէսը ներքին կռիւներով էր զբաղուած, հռովմէացիք կրկին պարթեւներից իլեցին Հայաստանը եւ Կրլաւդիոս կայսրը գերութիւնից արձակեց Հայոց թագաւոր Միթրիդատեսին (վրաց թագաւորի եղբորը), սա հռովմէական եւ վրացի զօրքերով Հայաստան խուժեց, յաղթեց Դամոնաքս սատրապին եւ տիրեց Հայաստանին:

Վարդանէսը Գոտարցեսի հետ հաշտուեց, տիրեց Սելեւկիա քաղաքին եւ սկսաւ ծրագրի կազմել Հայաստանին տիրելու միասին, սակայն ներքին խռովութիւնները թոյլ չը տուին նորան այդ գոր-

ծին ձեռնարկելու: Գոտարցեսի երրորդ ապստամբութիւնն ևս ճնշեց նա, այդ հակառակորդին հալածեց մինչև Սինդէս (Թէջէտ) գետի ափունքն և մի յուշարձան կանգնելով այնտեղ՝ յետ դարձաւ: Յաղթութիւններով զոռոզացած Վարդանէսն սկսաւ անգթութիւններ գործել, ուստի և դաւադրութեամբ որսի ժամանակ սպանուեցաւ, երևի 45 թուին: Գահը կրկին բռնաբարութեան առարկայ դարձաւ, ապա թագաւորեց կրկին Գոտարցեսը, որի անգթութիւնների պատճառաւ պարթևները թագաւոր խնդրեցին Հռովմ եղած պատանդներից. 49 թուին Գայոս Կեսարը տուաւ նրանց Մեհերգատէսին (որ է Միթրիգատէս Ե.), որի հետ միացան Ուռհայի թագաւոր Աբգար Ե. և Ագիաբէնէի թագաւոր Իզատէսն: Գոտարցեսը նախ իւր կողմը զրաւեց Մեհերգատեսի կուսակիցներին և ապա շրջապատելով նրա բանակը, մեծ յաղթութիւն տարաւ նրա վրայ, ջարդելով զրեթէ նորա բոլոր զօրքը (50 թուին): Պարտուած Մեհերգատէսն ընկաւ յաղթականի ձեռքն, որ նորա ականջները կտրելով արձակեց, իսկ ինքը Գոտարցեսը հիւանդանալով մեռաւ մի տարի յետոյ (51 թուին): Սրան յաջորդեց Արտաբանէս Գ.-ի եղբայր, Ագիաբէնի թագաւոր Վոնոնէսը, որ շատ կարճ ժամանակ թագաւորեց (51—54): Վանոնէսի աւագ որդին Վոլազազէս (Վազար-

շակ) Միլենացի մի հարձի զաւակ էր, բայց այսուամենայնիւ թագաւորեց պարթևաց վրայ իւր եղբայրների համաձայնութեամբ: Ապագայ խռովութիւնների առաջն տունելու համար սա իւր եղբայրներին թագաւոր դարձրեց սահմանակից երկրներում: Պակորոսը (Բակուր) ստացաւ Ատրպատականը, Մարաստանը, Տիրիդատեսին որոշեց տալ Հայաստանը, սրանք պէտք է մեծ արքայից յետոյ երկրորդ և երրորդ աստիճան ունենային: Պարթևաց տէրութեան մէջ չորրորդ թագաւորութիւնը կազմում էր արեւելեան իրանն և Ինդոսի շրջակայ երկրները, հինգերորդը Մաղքթաց աշխարհը (Կովկասի հիւսիսային զառիվայրը, ուր 19 թուին Բրիստոսից յետոյ իշխում էր մի արշակունի թագաւոր): Ագաթանգեղոսի և Սեբէոսի յիշած պարթևական չորս թագաւորութիւնները ճիշդ են, եթէ աչքի առաջ ունենանք՝ որ Ատրպատականի տէրութիւնը վերջը միացաւ բուն Պարսկաստանի հետ:

Հայաստանին տիրելու լաւ առիթ եղաւ Միթրիդատեսի սպանումն իւր ազգակից Ռատամիստոսի ճեղքով: Պարթևները յարձակուեցան Հայաստանի վրայ (52 թ.) եւ արքայապալան յափըշտակիչը փախաւ առանց ղեմադրութեան, Տիրիդատէսը տիրեց Արտաշատ եւ Տիգրանակերտ քաղաքներին: Պարթևաց ընկալում ժամտախտ

երեւեցաւ եւ նրանք ստիպուեցան քաշուել Հայաս-
տանից (53), ուստի Ռատամիստոսը կրկին թա-
գաւորեց: Ժողովրդական ապստամբութիւն ծագեց
Հայաստանում եւ Ռատամիստոսը վնասուեցաւ
54 թուին: պարթեւները հանգամանքից օգտուե-
ցան եւ կրկին տիրեցին Հայաստանին առանց որ
եւ է դիմադրութեան հանդիպելու: Հռովմէացիք
չէին կարող թոյլ տալ, որ Հայաստանը կրկին
պարթեւական երկիր դառնայ, ուստի Վոլազեզեսի
5185 ընդէմ հանեցին Վարդանեսի որդի Նանեսին եւ
Սկիւթացիներին դրոյեցին պարթեւների վրայ յար-
ժակուելու: Վոլազեզեսը զօրքերը կանչեց Հայաս-
տանից (55 թ.) եւ հաշտութիւն արաւ հռովմայե-
ցոց հետ: Նանեսի դրամները 55—58 թուականն
են հասնում, մինչ Վոլազեզեսինը վերսկսուեցան
61 թուից: Վոլազեզեսը 58 թուից սկսում է
դարձեալ արշաւանք դէպի Հայաստան առանց
հռովմայեցոց դէմ պատերազմ հրատարակելու:
հայկական պատերազմները համարուում էին Տի-
րիդատեսի զործ, որ կապ չունէր արքայից ար-
քայի հետ: Այս անգամ պարթեւները շատ թոյլ
էին. 58—59 թ. Դոմեցիոս Կորբուլուն առանց
մեծ ճիգերի տիրեց Արտաշատին եւ աւերեց այդ
մայրաքաղաքին, գրաւեց Տիգրանակերտը եւ ամեն
տեղ հռովմէական զերիշխանութիւնը վերականգ-
նեց: Հայաստանում Ներոն կայսեր հրամանով

թագաւորեց Տիգրան Ե., որ հերովդեան ցեղի
Կապադովկիա տեղափոխուած ճիւղիցն էր: Վեր-
ջապէս ներքին խռովութիւնները դադարեցին Պարս-
կաստանում, Վոլազեզեսը ծանաչեց Վրկանաց
(Հիւրկանիոս) աշխարհի անկախութիւնն եւ ձեռ-
նարկեց Հայաստանին տիրելու գործին: Հանդիսա-
ւոր կերպով թագաւոր պսակեց Տիրիդատեսին,
ազատանիւններից քաղկացած զօրախմբով՝ որի հը-
րամանատարն էր Մոնեզես, եւ Ատրպատականի
թագաւոր Մոնաբազոս Բ.-ի զօրքերով Տիրիդա-
տեսը դուրս եկաւ Տիգրան Ե.-ի դէմ, որ արշա-
ւել էր դէպի Ատրպատական, յետ միեց նրան եւ
պաշարեց Տիգրանակերտում: Վոլազեզեսն ինքը
պատերազմի դաշտը դուրս եկաւ, Մծքնում պա-
տահեց նրան Կորբուլունի մի դեսպանը, որի միջո-
ցաւ զինադադար հաստատուեցաւ մի առ ժամա-
նակ, որի զօրութեամբ պարթեւները Տիգրանա-
կերտի պաշարումը վերցրին եւ դեսպաններ ու-
ղարկեցին Ներոն կայսեր մօտ: Զինադադարի
զադոնի յօդուածներից մէկն այն էր, որ հռովմա-
յեցիք պիտի յետ կանչէին Հայաստանից Տիգրան
Ե.-ին պաշտպանող հռովմէական զօրքերին: Այս
անպատուաբեր զիջումն արաւ Կորբուլունը այն
պատճառով, որովհետեւ կրօնով եւ քաղով պար-
թեւներին աւելի մերձաւոր հայ ժողովուրդը միշտ
պարթեւների կողմն էր հակուում, իսկ հռովմէա-

կան իշխանութեան հպատակում էր այն ժամանակ միայն, երբ այդ իշխանութեան նեցուկ էր լինում հոովմէական քանակը:

Տիգրան Ե. թէպէտ հերովդեան ցեղի առ հոովմէացիս ունեցած ստրուկ հոգու տէրն էր, բայց ոյժ եւ եռանդ չունէր մի ապստամբ ժողովուրդ սանձելու: Վոլազագեսի խաղաղութեան պայմանները չընդունուեցան Հռովմում, ուստի եւ սկսաւ յայտնի պատերազմ:

Հայաստան ուղարկած հոովմէական զօրքերի հրամանատար Յէզէննիուս Պէտոսը անգգուշաբար ցրուեց իւր ոյժերն եւ երբ վտանգի մէջ զանուող Տիգրանակերտին օգնութիւն էր կամենում հասցընել, յաղթուեցաւ Վոլազագեսից եւ յետ քաշուեց (62): Պարթեւաց թագաւոր Տաւրոսի անցքերից դուրս եկաւ մի առ մի ջարդելով հոովմէացի պահապան զնդերն ու պաշարեց Արածանի հարաւային ափերում Ռանդէայի մօտ Յէզէննիուս Պէտոսի քանակը. Պէտոսը ստիպուեցաւ անձնատուր լինել, որովհետեւ Կորբուլոնը դիտմամբ ուշացաւ Ասորիքից նրան օգնութեան հասնելու, Հռովմէացիք ստիպուեցան դուրս գալ Հայաստանից եւ պարտուած զօրքը դեռ մի կամիւրջ եւս շինեց Արածանու վրայ պարթեւների համար: Կորբուլոնը աշխատել էր Եփրատի սահմանները պահպանել, մինչեւ իսկ ամրոցներ էր կառուցել միւս ափին,

թշնամու երկրում: Մոնէզէս զօրավարի հետ տեղի ունեցած տեսակցութեան ժամանակ Կորբուլոնը համաձայնեց քանդել այդ ամրոցները, սրա փոխարէն պարթեւները խոստացան Հայաստանից դուրս գալ եւ սպասել Ներոն կայսեր ուղարկուած դեսպանների քերելիք պատասխանին: Հռովմում վճռեցին պատերազմի շարունակել եւ հրամանատար կարգեցին կրկին Կորբուլոնին: Հազիւ անցել էր նա Եփրատն եւ ծովաց աշխարհն էր մտել, որ Վոլազագեսի ու Տրդատի դեսպաններն ընդունաւեցին: Ռանդէայում Տիրիդատէսը տեսակցեց Կորբուլոնի հետ, ուր որոշուեցաւ, որ Տիրիդատէսը քոլոր քանակի դիմացը կայսեր պատկերի առաջ վայր դնէ իւր թագը եւ ապա Հռովմ ուղեւորուի նոյնը կայսրից ստանալու համար: Վոլազագէսն ու Մոնէզէսն եւս պատանդներ տուին իրենց այս խոստման կատարումն երաշխաւորելով: Տիրիդատեսի ուղեւորութիւնը տեւեց մինչեւ 66 թիւը, երբ նա Հռովմում մեծ շքով ընդունուեցաւ եւ Ներոն կայսեր ձեռքով Հայաստանի թագաւոր պսակուեցաւ: Այս ելքն երկու կողմին եւս զոհացրեց, հոովմէացիք իրենց գերիշխանութիւնը հաստատեցին Հայաստանի վրայ, իսկ պարթեւները կարողացան իրենց թագաւորական ցեղի մի ճիւղը Հայաստանում թագաւորեցնել, որով պարթեւներն աւելի շահուեցան քան թէ հոովմէացիք:

Հայաստանին տիրապետելու խնդիրն այսպէս
յաջող լուծումն ստանալուց յետոյ՝ պարթևների
և հռոմէացոց յարաբերութիւնները բարեկամա-
կան դարձան. Վոլազազէսն և Վեսպասիանոսը բա-
րեկամ էին միմեանց մինչև 75 թուականը, սակայն
պարթևաց աշխարհը չը կարողացաւ այդ խաղա-
ղութեան պտուղները վայելել, որովհետև Վրկանի
թագաւորը Դերբենդի պահակը բանալով՝ Ալանե-
րին բաց թողեց պարթևաց երկիրը 72 թուին։
Ալաններն աւերեցին Մարաստանը եւ Հայաստանն
ու մեծ աւարով յետ դարձան։ Երեք տարի վերջն
Ալանները բուն պարթևաց երկիրն արշաւեցին և
Վոլազազէսին այնպէս նեղը ձգեցին, որ սա Վես-
պասիանոսից օգնութիւն խնդրեց, սակայն կայսրը
մերժեց նրա խնդիրը։ Ալանների այս արշաւանք-
ներն էին պատճառ, որ Վեսպասիանոսն ու նրա
որդիքը Վրաց Մեթրիդատեսի բերդերն ամրացրին։
Վեսպասիանոսի մերժումն Վոլազազէսին օգնելու
քիչ ֆնաց որ պատերազմի առիթ լինէր, բայց դար-
ձեալ յաղթեց կայսեր խաղաղասիրութիւնը և
սպառնացող վտանգի առաջն առնուեցաւ։ Ալան-
ների արշաւանքից քիչ յետոյ մեռաւ Վոլազա-
զէսը, որ պարթևաց նշանաւոր թագաւորներից
մէկն էր և որին պարսական ենք Զենդաւեստայի
մնացորդների ժողովածուն։

Իբրև յաջորդ Վոլազազէսի տեսնում ենք

գրամների վրայ երկու թագաւոր, սկսուած 78
թուի յունիս ամսից, սրանցից մին մօրուսաւոր է
և մերձաւորապէս 25 տարեկան, սա կոչուում է
Վոլազազէս Բ. միւսն աւելի երիտասարդ, Պակո-
րոս (Բակուր) Բ. անուամբ։ Երևի սրանք երկու
աթոռակից եղբայրներ էին։ Բակուրի գրամները
հասնում են մինչև 84 թուականը, մինչ Վոլազա-
զէսի վերջին գրամը 79 թուիցն է, որից յետոյ
հանդէս է գալիս մի Արտաւանէս Դ.։ Սա պաշտ-
պան է հանդիսանում Փոքր Ասիայում երևան
եկած կեղծ Ներոնին, ապաստանարան է տալիս
նրան և սպառնում է Տիտոս կայսեր, որ բռնու-
թեամբ այս Ներոնին հռովմայ գահի վրայ կը բազ-
մացնի։ Այս սպառնալիքը չ'իրագործուում, որով-
հետև պարթևաց երկրում ներքին խռովութիւն-
ներ են տեղի ունենում, որ դադարում են միայն
93 թուին, երբ միահեծան տէր է դառնում
Բակուր Բ. սա 110 թուին դեռ իշխում էր,
որովհետև այդ թուականին նա Նդեսիոյ թափուր
մնացած գահը ծախեց Արգար բար իգատին։ Բա-
կուրից յետոյ 110—113 թուականին պարթևա-
կան գահի համար կռուում են Օարոյէս, Վոլո-
գազէս և Մեհերդոտէս Զ. Թեկնածուները,
որոնցից ոչ մէկը յաղթող չի հանդիսանում, ուս-
տի ներքին պտերազմներն աննդհատ շարունա-
կուում են։

Այս հանգամանքում Օսրոյէան անխոհեմութիւն ունեցաւ էքսեղարեսից, որին իւր հայր Բակուրն առանց հոռվմէացոց կողմից արգելքի հանդիպելու Հայաստանում թագաւորեցրել էր, զահը խլելու եւ տալու Բակուրի միւս որդուն, Պարթամասիրիսին: Սրանով հոռվմէացոց միջամտութիւնն անխուսափելի դարձաւ: Տրայանոս կայսրը 113 թ. հոկտեմբերին սկսում է իւր արշաւանքը դէպի արեւելք: Օսրոյեսի դեսպանները, որոնք խաղաղութիւն էին առաջարկում եւ խնդրում հայկական թագը Պարթամասիրիսի համար, կայսեր պատահեցին Աթէնքում, կայսրը նրանց յետ դարձրեց, յայտնելով որ պատասխան կը ստանան տեղն ու տեղը:

Տրայանոսը 114 թուին մտաւ Հայաստանի սահմանը, առանց պատերազմի զրաւեց Արսամիսատան: Արեւմտեան Հայաստանի նախարարներն ու թագաւորն արդէն նրան ընդառաջ էին դուրս եկել: Պարթամասիրիսն խոնարհ ոճով գրել էր նրան իւր խնդիրը եւ անձամբ եկաւ էլէգէա, ուր զահի վրայ քազմած կայսեր առաջ, հոռվմէական քանակի դիմացը, իւր թագը վայր դրաւ: այն խաբուսիկ յուսով, որ Տրդատի պէս ինքն էլ յետ կը ստանայ նոյնը կայսրից: Տրայանոսը յայտնեց հայոց թագաւորին, որ ինքը Հայաստանը պիտի հոռվմէական զաւառ դարձնի, քացի սրանից առա-

ջարկեց նրան թողնել հեռանալ Հայաստանից եւ իւր հրամանը կատարել տալու համար, մի հոռվմէական պահակախումբ տուաւ նրան ուղեկից: Պարթամասիրիսը կամեցաւ փախչել հոռվմէացի զինուորների հսկողութիւնից եւ սպանուեցաւ: Այս դիպուածից յետոյ զրաւուեցաւ ամբողջ Հայաստանը եւ սահմանակից ազգերի մանր թագաւորները հալատակութիւն յայտնեցին կայսեր: Տրայանոսը յետ դարձաւ Հայաստանից դէպի Նոբսիա, որի թագաւորը նոյնպէս ընդառաջեց եւ հպատակութիւն յայտնեց: Միջազետքում 115 թ. պատերազմներ տեղի ունեցան: Կայսեր գլխաւոր ընդդիմադրողն եղաւ Ադիաբենի Մեթարզապէս արքան, որի նախնիքը Վոլադադէս Ա-ի ժամանակ եւս պաշտպանել էին տէրութիւնը Ներոնի զօրավարների դէմ: Մեթարզապէսին պատկանող Մծբինն առան հոռվմէացիք, նորա դաշնակից Մինգարայի իշխան Մանուէն փախաւ Ադիաբենէ եւ նրա երկիրն անցաւ հոռվմէացոց ձեռքը: Այս կռիւների ժամանակ Օսրոյեսի անունը միանգամ է յիշուում, նա մարտ էր մղում Կորդիւյէնէի [Կորդուաց աշխարհ] Մանիսարոսի դէմ, որ Պարթամասիրիսի արտաքսուելուց յետոյ Հայաստանի մի քանի զաւառները զրաւել էր: Մանիսարոսը նեղն ընկնելով Օսրոյեսից, իւր տիրապետած երկրներն առաջարկեց Տրայանոսին: Կայսրը տեսնելով, որ նրա խոս-

տուճները կեղծ են, նուաճեց Կորդուաց աշխարհը
և Հայաստանին սահմանակից Մարաց [Մարկոմե-
զի] երկիրը:

Միջագետքն այժմ հռովմէական գաւառ դար-
ձաւ և կայսրն ստացաւ Պարթիկոս պատուանունը
115 թուին: Յաջորդ տարին Տրայանոսը Տիգրիսն
անցաւ, նուաճեց Մեքարզպետի տէրութիւնը և
կազմեց մի նոր հռովմէական գաւառ Ասորեստան
անուամբ: Այդ տեղից կայսրը դիմեց դէպի Բաբե-
լոն առանց ընդդիմութեան հանդիպելու, որովհե-
տեւ ներքին խռովութիւնները դեռ շարունակուում
էին Պարսկաստանում: Կայսրը անցաւ Տիգրիսի
ստորին հոսանքից միւս կողմն և տիրեց Տիգրոնին:
Օսրոյեսի աղջիկը և թագաւորական գահն ընկան
կայսեր ձեռքը, իսկ ինքը Օսրոյեսը փախաւ եւ
ապաստանարան գտաւ Հայաստանում: Որի հիւսի-
սային մասերը կատարելապէս նուաճուած չէին
կայսրից:

Տրայանոսը շարունակեց իւր արշաւանքը դէ-
պի հարաւ և պարսից ծոցից նաւատորմ իսկ ու-
ղարկեց դէպի Բահրայն կղզիքը: Հէնց այդ միջոցին
ապստամբեցին նուաճուած երկրները և հռովմէա-
կան գաւառ հրատարակուած բոլոր երկրներում
ջարդեցին և կամ դուրս քշեցին հռովմէական
պահակ զնդերը: Ապստամբութեան կեդրոնն էր
Ասորեստանը. ապստամբներին գլուխ էր անցել

Մեհերդուէս 2., գահի համար պատերազմող
պարթեաներից մէկը: Սա արշաւեց մինչև Կոմմո-
գենէ, ուր ձիուց վայր ընկնելով մեռաւ: Նրան
յաջորդեց իւր որդի Սանատրուկ Բ., որի հետ
միացաւ Հայաստանից Օսրոյեսի որդու Պարթա-
մասպատի առաջնորդութեամբ հասած զօրքը: Ինչ-
պէս երևում է պարթեական թագի թեկնածու-
ների մէջ հաշտութիւն էր տեղի ունեցել, ուստի
և երկու հօրեղբորորդիք շարունակում էին կռուել
հռովմի դէմ: Տրայանոսի ուղարկած երկու զօրա-
վարներից մինը բոլորովին ջարդուեցաւ, իսկ միւ-
սը, Լուսիոսը, իւր կողմը գրաւեց Պարթամաս-
պատին, որ գիշերով թողեց Սանատրուկի բանակն
ու անցաւ հռովմէացոց կողմը: Սանատրուկը ջար-
դուեցաւ յաջորդ օրուան ճակատում և սպանուե-
ցաւ, հռովմէացիք տիրեցին Մծբնին, առին և
կործանեցին Եդեսիան և Սելեկիան: Թէպէտեւ
ապստամբութիւնը յաջողութեամբ ընկճուեցաւ,
բայց Տրայանոսը տեսաւ, որ անհնարին էր այդ
նուաճած երկրները ձեռքին պահել, ուստի Տիգ-
րոնի մօտ մի դաշտավայրում, հռովմէական և
պարթեական բանակի առաջ պարթեական թագով
պսակեց Պարթամասպատին (116 թ.):

Յաջորդ տարին կայսրը Միջագետքի Ատրէ-
քաղաքը պաշարեց, բայց առնել չը կարողանալով
և հիւանդանալով՝ դարձաւ Ասորիք. այնտեղից

ևս ուղևորուեց Հռովմ, բայց ճանապարհին մե-
ռաւ 117 թ. օգոստոսի 7-ին: Պարթամասպա-
տէսը չը կարողացաւ դէմ դնել հօրը և Օսրոյէսը
կրկին տիրացաւ իւր գահին: Հաղորդանոս կայսրը
լաւ հասկանալով՝ որ չէ կարող նոր նուաճուած
գաւառները, Ասորեստանը, Միջագետքն ու Հա-
յաստանը պահել առանց հռոմէական զօրքի, հը-
րաժարուեցաւ դրանցից և Եփրատը կրկին սահման
դարձրեց հռովմէական կայսրութեան: Այդ միջո-
ցին Պարթամասպատէսն* ստացաւ Ուռհայի կամ
Եդեսիոյ թագաւորութիւնն, ուր իշխեց 119—123
թ.: Տրայանոսի արշաւանաց և տիրապետութեան
քաղաքականութիւնը միայն այն հետեւեալն ունե-
ցաւ, որ պարթեաց տէրութեան թուլութիւնը
պարզուեցաւ: Ներքին խռովութիւնները չէին դա-
դարում: Օսրոյէսի հետ միասին կամ իբրեւ նրան
հակաթու շարունակում էր Վոլազազէսը դեռ
դրամներ կոխել: Հաղորդանոսի օրով պարթեաների
յարաբերութիւնները բարեկամական էին և 123
թուին պատերազմի սպառնացող վտանգի առաջն
առնուեցաւ կայսեր հետ բանակցութեամբ, այդ
միջոցին էր, որ Պարթամասպատէսն հեռացուե-
ցաւ Եդեսիոյ թագաւորութիւնից, որովհետեւ նրա

*. Ուռհայի թագաւորները կարգում սա կոչուում
է Պաքնաթասպատ:

ներկայութիւնը մի մշտական սպառնալիք էր ար-
քայից արքայի համար: Եդեսիայում դահն անցաւ
կրկին նախկին եդեսական հարստութեան: Օսրո-
յէսի գերի ընկած աղջիկն ազատութիւն ստացաւ
130 թուին, իսկ թագաւորական դահը մնաց
դարձեալ հռովմէացոյ ձեռքը:

Օսրոյէսի վախճանից յետոյ միահիծան տէր
եղաւ Վոլազազէս Բ: Սրա ժամանակ 135
թ. Ալանները կրկին հեղեղեցին Մարաստանը շը-
նորհիւ վրաց Փարսամանէս Բ. թագաւորի, որ
նրանց առաջ բաց էր արել կովկասեան անցքերը:
Ալանները աւերեցին Հայաստանի եւ Կապադոքի-
կիայի մի քանի նահանգները: Այս առթիւ յի-
շուում է մի Վոլազազէս թագաւոր, որ զանգա-
տուեց կայսեր Փարսամանէսի վրայ, որ սակայն
անձամբ հռովմ գնաց եւ մեղմացրեց կայսեր ըար-
կութիւնը: Այս Վոլազազէսն էր Հայոց այն թա-
գաւորը, որ անուամբ մեզ յայտնի չէ եւ որին
Հաղորդանոսը թագաւորեցրեց 117-ին եւ ապա
140—143-ին նրան մի յաջորդ նշանակեց: Սովո-
րաբար այս Վոլազազէսին շփոթում են պարթե-
աց Վոլազազէս Բ.-ի հետ, որ դրամներին նայե-
լով՝ մեռել է 148 թուին, 76 տարի թագաւորե-
լուց և 95 տարի ապրելուց յետոյ:

Վոլազազէս Բ.-ին յաջորդեց Վոլազազէս Գ.:
Սա կամենում էր տիրել Հայաստանին, բայց դեռ

եւս կռիւ չը սկսած՝ 155 թուին Անտոնիոս Պիոս կայսեր հետ Անտիոքում տեսակցութիւն ունենալով յետ կեցաւ իւր մտադրութիւնից գոնէ մի առ ժամանակ։ Պարթեւաց թագաւորը պատերազմի պատրաստութիւն սկսաւ տեսնել եւ Անտոնիոս Պիոսի մահուանից յետոյ յարձակուեցաւ Հայաստանի վրայ 162 թ.։ Հռովմի պաշտպանեալ Սոհէմոս թագաւորը վնդուեցաւ Հայաստանից եւ նրա տեղը թագաւորեց Բակուրը։ Կապաւանով-կիայի հռովմէական զօրավար Էլիոս Սեւերինոսը յարձակուեց Հայաստանի վրայ, բայց Էլեգէայի մօտ շրջապատուեց պարթեւաց թագաւոր Օսրոյէսի զօրքերից եւ նրա ամբողջ լեզիոնը ջարդուեցաւ, ինքը Սեւերինոսը իւր սրի վրայ ընկնելով անձնասպան եղաւ։ Պարթեւները մօտն իջաւորութեան և ապա Ասորիք և մեծ աւերմունք դործեցին, հռովմէական զօրքերն Ասորիքում ևս յաղթուեցան և նեղն ընկած գաւառացիք սկսան միառնալիք ցոյց տալ հռովմից բաժանուելու։ Վերջապէս հռովմից ժամանեց կայսեր եղբայրը։ Լուկիոս Վերոսը, որի հմուտ զօրավար Աւիդիոս Կասսիոսն սկսաւ դիմադրութեան պատրաստուել։ Հռովմէացիք խաղաղութիւն առաջարկեցին, որ Վոլազազէս Գ. մերժեց։ Այս պատերազմը, որ պաշտօնապէս կոչում է «հայկական եւ պարթեւական» շարունակուում էր երկու զանազան վայրերում։

Հայաստանը կրկին զրաւեցին հռովմէացիք Սուտիրոս Պրիսկոսի ձեռքով, սա Արտաշատն առաւ եւ գահնկեց արաւ Բակուրին (163), կրկին թագաւորեց Սոհէմոսին, որին գահի վրայ քարձրացնելն յանձնուեցաւ Մարտիրոս Վերոսին, Պրիսկոսի յաջորդին։ Հռովմէացի զօրավարն այդ զործը խաղաղութեամբ եւ համոզելով գլուխ քերաւ (164), Աւիդիոս Կասսիոսն ինքն անձամբ պէտք է պարթեւների առաջն առնէր Ասորիքում։ Ներսիսի մօտ տեղի ունեցած ճակատամարտում Վոլազազէսը յաղթուեցաւ և Ասորիքից յետ քշուեց, հռովմէացիք մօտն հիւսիսային Միջագետք, Եգիպտոս պաշարեցին և առանձն երկար դիմադրութիւն ցոյց տուաւ Մծբինը, սակայն վերջն ընկաւ թըշնամեաց ձեռքը։ Ներքին խռովութիւնները ստիպեցին Վոլոգաւեսին թողնել Միջագետքն ու անցնել Տիգրիսի միւս կողմը։ Կասսիոսը հետեւեց նրան և առաւ Սելեկիան, որ 400,000 բնակիչ ունէր այն ժամանակ։ Հռովմէացիք իբրեւ բարեկամ Սելեկիա մանելուց յետոյ՝ պատրուակ դտան քաղաքը կողոպտելու և այրելու, որով ոչնչացաւ հելլենական քաղաքակրթութեան այդ կեդրոնը։ Կասսիոսը դիմեց Տիգրոն և արքունի զգեակը առնելով աւերեց ու հողին հաւասարեցրեց։ Յաղթական կերպով 165 թ. Կասսիոսը դարձաւ Ասորիք։ Այդ յաղթանակների ժամանակ անգործ չէր եւ Մարտի-

րոս Վերոսը, որ Հայաստանից մտաւ Ատրպատական եւ մեծամեծ յաջողութիւններ ունեցաւ: Երկու կայսրները այս սրատերազմների շնորհիւ ստացան Արմենիկոս, Պարթիկոս, Մաքսիմոս եւ Մեդիկոս տիտղոսները: Բառամեայ պատերազմներից յետոյ խաղաղութեան դաշն կոռուց 166 թուին: Այս դաշինքի գլխաւոր կէտն էր — Միջագետքի հռովմէացոց ձեռքն անցնելը: Լուկիոս Վերոսը Եդեսիայում թագաւորեցրեց Մանուին, իսկ ինքը գնաց Հռովմ իւր յաղթութիւնները տօնելու: Հռովմայեցիք իրենց այս մեծ յաղթութիւններից չափաւոր կերպով օգտուեցան, բայց պարթեւաց զօրութեան վերջին հարուածը տուին, այսուհետեւ պարթեւաց թագաւորութիւնն արդէն դէպի քայքայումն է դիմում:

Պարթեւաց երկիրը քառասնամեայ խաղաղութիւն վայելեց այս պատերազմից յետոյ. Վոլազագէս Դ. ին յաջորդեց 191 թ. Վոլազագէս Դ. սրա օրով Սեւերոս կայսրը արշաւեց նախ Միջագետք (195 թ.), որ պարթեւները դրաւել էին օգուտ քաղելով հռովմայեցոց ներքին կռիւներից: Ուռհայի թագաւոր Արգար Ը. անմիջապէս հպատակութիւն յայտնեց կայսրի, Ադիաբանէն զրաւեց, հարաւային Միջագետքը նուաճելով դարձրեց հռովմէական գաւառ: Սեւերոսի և Ալեքինոսի մէջ ծագած պատերազմից օգտուելով պարթեւները դիմեցին Միջա-

գետք և պաշարեցին Մծբինը: Սեւերոսը Ալեքինոսին յաղթելուց յետոյ 197 թուին եկաւ Ասորիք, իսկ 198 թուին, երբ Միջագետք արշաւեց, պարթեւներն առանց կռուի յետ քաշուեցան: Սեւերոսը սկսաւ Մծբնում մեծամեծ պատրաստութիւններ տեսնել առաջիկայ պատերազմի համար, նորան օգնում էր պարթեւաց թագաւորի Տրդատ անուշով եղբայրը: Եփրատի ընթացքով գէպի հարաւ դիմեց հռովմայեցոց բանակն ու հաւատորմիդը 199 թ. Բաբելոնիայից նա անցաւ գէպի Տիգրիս և յանկարծակիի բերելով ջարդից պարթեւական բանակը: Սոյն տարուան ձմեռը առաւ նա Տիգրեոնը, որտեղից 100,000 հոգի գերի վարեց և քաղաքն էլ աւերեց: Նայսրը չը հալածեց Վոլազագէսին և պաշարի նեղութիւն քաշելով՝ ստիպուեց յետ նահանջել: Միջագետքում Սեւերոսը փորձեց Ատրա քաղաքն առնել, բայց չը կարողացաւ, ուստի մտաւ Ասորիք 200 թ.: Յաջորդ տարին Սեւերոսը զբաղուած էր Հայաստանում: Այնտեղ եւս հռովմէական զէնքի ոյժը ցոյց տալուց յետոյ կրկին դիմեց Ատրայի վրայ. բայց առնել չը կարողանալով՝ ամօթահար յետ դարձաւ, որով Ատրայի փոքրիկ իշխանութեան զէնքի փառքը շատ բարձրացաւ և հռովմայեցոյն ընկաւ: Վոլազագէս Դ. մեռաւ 209 թ. նրան յաջորդեց իւր որդի Վոլազագէս Ե. սրա ժամա-

նակ սկսան ներքին կռիւները Պարսիս նահանգում որոնք վերջը կործանիչ եղան պարթևների համար: Արտաքսանէսը թագաւորի եղբայրը, 213 թուին իրեն թագաւոր հրատարակեց, բայց 216 թուին միայն զօրացաւ և տիրեց մայրաքաղաքին: Անտոնինոս Պիոսը Արտաքսանէս Ե.-ի աղջիկն իրեն կնութեան խնդրեց, բայց մերժումն ստանալով՝ պատերազմ հրատարակեց և արշաւեց պարթևաց երկիրը: Հռովմէացիք աւերեցին Ագիաբանէի հիւսիսային սահմաններն և երկիրը կողոպտելով յետ դարձան, պարթևները զիմադրութիւն ցոյց չը տուին: Անտոնինոսը պատրաստում էր կրկին պարթևաց երկիրն արշաւելու, որ սպանուեցաւ 217-ին: Նրա յաջորդ Մակրինոս կայսեր չը յաջողուեցաւ խաղաղութիւն հաստատել պարթևաց հետ: Մծբնի մերձակայքում պարթևաց թագաւորը երկու անգամ մեծ յաղթութիւն տարաւ հռովմէացոց վրայ և կոխելով հռովմէական սահմաններն աւերեց: Մակրինոսը 50 միլիոն դենար (20,000,000 ռուբլու չափ) վճարելով պարթևաց թագաւորին՝ խաղաղութեան դաշն հաստատեց: Այդ միջոցին (222 թ.) Արտաքսանէսը միահեծան տէր դարձաւ պարթևական գահին յաղթելով իւր եղբօրը:

Պարթևական իշխանութեան վախճանը հասել էր, Արտաքսանէսը չը կարողացաւ այդքան դժուարութիւններով ձեռք բերած գահը իւր ժառանգին

թողնել, նա եղաւ վերջին պարթևական թագաւորը Պարսկաստանում:

Պարսիս նահանգը, որտեղից դուրս եկաւ պարթևական իշխանութեան կործանիչը, բոլոր պարթևական շրջանում վարել է առանձնական կեանք, ուստի և շատ սակաւ է յիշատակուում: Նոր ժամանակներումս գտնուած դրամների շնորհիւ միայն զիտեմք այժմ, որ Պարսիսը մի առանձին փոքրիկ թագաւորութիւն էր: Մեր ունեցած դրամները երեք զանազան շրջաններից են. առաջին շրջանի իշխանները կոչուում են Փերիտկարի, երկրորդինը և երրորդինը Մալքա, երրորդ շրջանի թագաւորները զանազանուում են նախընթաց երկու շրջանի իշխաններից իւրեանց պարթևական զգեստով: Այս դրամների երկրորդ երեսի վրայ գտնուում է միշտ կրակի սեղանը, որ ցոյց է տալիս՝ թէ Պարսիսի իշխաններն սկզբանէ ջերմեռանդ կրակապաշտներ էին: Այս իշխանների անունները մասամբ հին պարսկական, արեւմտեան անուններ են, ինչպէս՝ Դարեհ, Արտաշէս և մասամբ Սասանեան ժամանակի, ինչպէս՝ Ներսէս, Յազկերտ և ին: Այս իշխանների ժամանակի և նրանց գործերի մասին մենք շատ քիչ բան գիտենք, երկրորդ դարու կիսին բոլորովին քայքայման էր հասել այդ թագաւորութիւնը: Պերսիսը կեդրոն էր զրադաշտական պաշտաման, երկրի մայ-

րաքաղաքում, Ստահրում կամ Խստախրում, որ գտնուում էր Պերսեպոլիսի մերձակայքում, զբտնուում էր Անահիդ դիցուհու նշանաւոր ատրուշանը: Այս տաճարի վերակացուն էր Սասան, սա արքունի ցեղից մի աղջիկ կին առնելով հիմք դրաւ իւր տան ապագայ մեծութեան: Այս ամուսնութիւնից ծնաւ Պաքակը, որ իւր որդի Արտաշիւրի համար Դարա-բերդի հրամանատարութիւնը ձեռք բերաւ: Այս եռանդուն և փառասէր երիտասարդն սկսաւ 212 թուից մանր թագաւորների դէմ կռուել և յաղթելով նրանց՝ սպանեց: Պաքակը իւր որդու դրգմամբ պատերազմի դուրս եկաւ Խստահրի վերջին թագաւոր Գոգեհրի դէմ և յաղթելով սպանեց նրան: Սրանից յետոյ Պաքակը դիմեց Արտաքանին և խնդրեց, որ Գոգեհրի թագն իւր աւագ որդուն տայ: Արքայից արքան չը համաձայնեց, բայց Պաքակը ուշք չը դարձրեց նրա վրայ. երբ Պաքակը մեռաւ, Խստահրում թագաւորեց նրա աւագ որդի Շապուհը:

Եթէ Շապուհը պատահաբար չը մեռնէր շուտով՝ երկու եղբայրների մէջ կռիւ պիտի ծագէր, բայց Շապուհի մահուանից յետոյ Արտաշիւրը զրաւեց Ստահրը, ապա իւր ընտանիքի մէջ կատարած արիւնհեղութեամբ տէր դարձաւ նախ իւր տանը, ապա բոլոր Պերսիս նահանգին: Միայն այժմ բացուեցաւ Արտաքանի աչքը և նա 224-ին Նիրո-

Ֆարին ուղարկեց, որ Արտաշիւրին շղթայակալ իւր առաջը բերէ: Այս առթիւ ծագեց այն պատերազմը, որ վախճան տուաւ պարթեական իշխանութեան: Արտաշիւրը լսելով Նիրոֆարի գալը արշաւեց Շադ — Շապուհի, Խապահանի թագաւորի դէմ և յաղթելով նրան՝ տէր դարձաւ նրա երկրին, ապա յաղթեց և Ահվազի թագաւոր Նիրոֆարին: Այս յաղթութիւններից յետոյ զրաւեց նա և Մեդենէ կոչուած երկիրը: Սրանից յետոյ պատգամ ուղարկեց Արտաքանին տեղ և ժամանակ նշանակելու կռուի համար. Արտաքանը այս հրաւերն ընդունեց և Հորմիզդշան դաշտում տեղի ունեցած ճակատամարտում յաղթուեցաւ և սպանուեցաւ: Արտաշիւրը արքայից արքայ հրատարակուեց 227-ին ապրիլի 28-ին:

Արտաշիւրը յաջորդ ժամանակի ընթացքում մինչև 228 թուականը հեռեւեալ գործերը կատարեց. նախ Ատրա քաղաքի վրայ յարձակուեցաւ և առնել չը կարողանալով՝ յետ քաշուեց, ապա յարձակուեց Մարաստանի վրայ և զրաւեց նրա մեծ մասը, անյաջող փորձ արաւ Հայաստանին տիրելու եւ յետ մղուեցաւ հայերից: Տիգրանին տիրեց Արտաշէս 227-ի աշնանը, որովհետև Արտաքանի մահուանից յետոյ նրա եղբայր Վաղարշ Ե. մի առ ժամանակ կարողացել էր դէմ դնել Արտաշիսին:

Արեւելեան Պարսկաստանին Արտաշիւր աւելի

ուշ է տիրել, նրա ձեռքն անցած երկիրներն էին
Սահաստան, Վրկան և Մերվ. բոլորովին արե-
ւելեան երկիրները դեռ երկար ժամանակ ազատ
մնացին Սասանեան տիրապետութիւնից, այնտեղ
իւր գոյութիւնը պահպանեց Հին Տոխարացոց
թագաւորութիւնը, որի վախճանը հասաւ 429
թուին, երբ սասանեանները հայապտանում վերջ
դրին արշակունի հարստութեան:



1m

ՀՀ Ազգային գրադարան



NL0403323

